

Hentchak :

Organe Central

DU PARTI

HENTCHAKISTE

ՀԱՅԱՍՏԱՆ

Journal Arménien

mensuel

XXI Année

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՕՐԳԱՆ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

## ՍԱՀՄԱՆԻ ԵՐԿՈՒ ԿՈՂՄԵՐՈՒՄ

Իր թուլութեան օրերի մէջ՝ ցարիզմը խոստում խոստումի յետևից շուրջէջ։ Ի հարկ է հեռատես մաքրել այդ բոլոր խաղերի արժէքը իր ժամանակին գնահատեցին, սակայն եղան պարզ ամիտներ էլ, որոնք պաշտպանեցին այն կարծիքը՝ թէ դեռ կարելի էր հաւատալ մի թագաւորի և նրա շրջապատողներին։

Իրականութիւնը, դառն իրականութիւնը չուշացաւ դառն և յայտարարելու, որ դահաւալները նոյնն են ամէն երկրի և ամէն ժամանակների մէջ, — նրանք պատրաստ են ամէն զիջումի կամեութիւն ցոյց տալ, և կտան էլ, բայց այն նպատակով, միայն այն հեռանկարով, որ դրանք նորից խլուին, երբ իրենք մի փոքր յաջող ընթացք կառնեն, և սրբանք միջոց կընձեռնեն՝ իրենց մտադրութիւնները ի կատար ածելու։ Ձկա՛յ, չի՛ կարող լինել հաւատք ո՛չ մի Թագաւորի խօսքին։ Միակ խօսքը, որով նրա հետ կարելի է խօսել, — դա վերջնական տապալման խօսքն է, այդ է ցոյց տուել ընդհանուր ազգերի և յեղափոխութիւնների պատմութիւնը։

Այսօր՝ պատմական այդ փուլի առաջն ենք կանգնած որոշ կերպով։

Բէական յաղթող հանդիսացաւ, շնորհիւ բուրժուական տատանման, նրա մեղկութեան, աւելին՝ շնորհիւ նրա լուսեայն մեղսակցութեան։ — պրօլետարական, սոցիալիստական կոհակից զարգանդած, նա՛ այդ շահագործող դասակարգը, փոխանակ իր թիկունքը տալու նոր Ոյժերին, գէթ այնքանով, որքան որ սրանք իրեն գործակից էին համարուած ցարիզմը հիմն ի վեր տապալելուն մէջ, նա դաւաճանօրէն աւելի նախընտրեց՝ հէնց կռուի ամենատաք և ամենավրժառական օրերի մէջ՝ ցարիզմի սիւներից կառնել և աւելի դէպի աջ հակուել, քան թէ դէպի ձախ. ու այդ տատանողական, այդ անվճռական, այդ դաւաճանական զիբքը մեծապէս պատճառ եղաւ, որ նոր Ոյժերը հարկադրուեցան ժամանակաւորապէս տեղի տալ միացած Հին ոյժերի առաջ, ու այդպիսով ասպարէզը մնաց ցարիզմին և նրա արբանեակներին։ Ու ի՞նչ եղաւ պատմական այդ շրջադարձի հետեանքը, — այն՝ որ հին և խաւար ոյժերը յաղթող հանդիսա-

ցան ու բէական իր նախնիների շրջանի մէջը մտաւ։ Օրհասական մի բռնապետութիւն՝ ինչ որ կարող և ընդունակ է անելու իր դէմ եղած ընդդիմադիր ոյժերը արմատապէս խորտակելու և այդ խորտակումից սպասելու իր վերջնական ապահովութիւնը — նա կատարեց ամենավաղագ կերպով։ Ամբողջական կոտորածները, բերդարգելութիւնները, կախաղանները դարձան այն միջոցները, որոնք եկած էին ասպարէզը մաքրելու ցարիզմին՝ անհաճոյ եղող ոյժերից։ Եւ հետեանքը, հետեանքը այն եղաւ, որ նոյնիսկ մեղսակցող բուրժուական սկսեց արտունջի և բողոքի ձայներ արձակել. բայց նա անգոր է, որ և է գործ կատարելու, որովհետև յեղափոխութեան խական կոհակը՝ պրօլետարիատը ամենաբռն յարձակման ենթարկուելուց՝ յետոյ՝ դեռ իր ուժերը լրիւ կազդուրած չէ, նորից պատնէշի վրան անցնելու։

Ու ցարիզմը, յաղթութիւնը տանել՝ կարծող ցարիզմը, այժմ իր առօրեայ անօրինութիւններով վալիս է ասելու, որ ժամանակը հասել է իր թափած խոստումները մէկիկ մէկիկ յետ առնելու։ Եւ՛ այդպէս էլ լինում է, — ցարիզմը ձգտում է վերադառնալ իր նախկին օրերին։

Առնենք ինչորի մի կողմը։

Կովկասի միամիտ հաշ ժողովուրդը, պատմականապէս յաճախ խաբուող, բայց՝ չխրատուող այդ ժողովուրդը, մի բուռն կարծեց թէ ցարիզմը զղծաց և ուղեց շտկել իր անցեալ սխալը, ուստի և իրենից խլուած իրաւունքները յետ դարձրեց։ Նա չուզեց հաւատալ, նա չտեսաւ, որ այդ իրաւունքների յետ տրուելը հետեանք էր չեղափոխական կոհակին, սա էր, որ նրան ստիպել, բռնադատել էր վերադարձնել իր յափշտակածը։ Ըլինելու այդ կոհակը, ցարիզմը ոչինչ, բացարձակապէս ո՛չինչ չէր վերադարձնել. և նա այժմ այդ յարմար պարտքան եկած է համարում, — ջանք է անում, բարձր շրջաններում, հաշ դպրոցները այժմս են թարակել նոյն դրութեան, ուր որ էին նրբանք Գօլիցինի օրօք, — մնացածը ժամանակի խնդիր է։

Ինչ այդ չէ միայն. ցարիզմը այդ գերազանցօրէն միամիտ ժողովրդին ուղում է ցոյց տալ, որ իր գոյութիւնը, որպէս ժողովուրդ, որպէս ազգ, որպէս պատմա-

անհատական գոյութիւն վտանգի մէջ է, և ինքն է որ նրան պիտի պաշտպանի, — ումնից, — Օսմանցիներէր, կովկասեան Թաթար, Թուրք և այլ լեռնական ժողովրդներէր: Մաքիավելական այդ խաղը լոյսի պէս պարզ է: — Օսմանցիին բանակներ է հաւաքել սահմանների վրայ և մի նշանի է սպասում յարձակում գործելու, — ասում է: Չենք ասում, որ ցարիզմը իր այս օրերի մէջ անպատճառ ցանկանում է պատերազմի դուռ բանալ, — ո՛չ, նա այդ չի ցանկանալ դեռ միառժամանակ, մինչև որ իր ներքին գործերը բաւ չէտէին. բայց չենք էլ անքան միամիտը, որ չը կարծենք թէ այդպիսի մի պատերազմ կ'արող է իր հաշիւն երի մէջ մտնել, — դրանով նա միջոց կունենայ աւելի սեղմել տալու ցարիզմին դեռ հաւատարիմ մընացող ու տատանուող շարքերը, դրանով նա կարող է մի տեսակ ժողովրդականութիւն ձեռք բերել և ժողովրդի, մանաւանդ չխորհող, չպաշարող մասի ուշադրութիւնը ներքին գործերից դարձնել դէպի դուրսը. ու հէնց դրա համար էլ պատերազմական լուրերին, Թրքական յարձակումներին ա՛նքան լայն ծաւալ է տալիս, որպէսզի մտքերն մի տեսակ յուզուած վիճակի մէջ պահի և ուզած ու պատեհ համարած բոլորին իր դերը խաղաց և յառաջ անցնի: Յարկմի դերը այստեղ ուղղակի պրօփօկատօրական է, և ինքը աւելի է պատերազմական պրօփօկատօրի դեր կատարում, քան Օսմանցին, — սա ոչ ոքի համար գաղտնիք չէ:

Հայ ժողովրդին պաշտպանութեան յոյսերով օրորողին մենք լաւ ենք ճանաչում, գիտենք նրա խօսքերի արժէքը և ձգտումների աստուած:

Ո՞վ էր, 1894-1896-ին, Հայաստանը արեան մէջ լողացնել առող թելադրիչ ազդակը. ո՞վ էր Սուլթանին մայիսի 11-ի ծրագրի գործադրութեան ընդդիմադրութիւն յորդորողը, ո՞վ էր Անգլիային իր նաւախմբերով սպառնացողը. ո՞վ էր Հայ յեղափոխականների դէմ ամենախիստ հալածանք հանողը՝ Սուլթանին ծառայութիւն մատուցանելու դիտումով. ո՞վ էր Սուլթանից զիջուած երկրորդը և նրա բաղուկը դորեպիստոյն ի զին մեր արեան, ի զին մեր ոչնչացման. և վերջապէս ո՞վ էր Թաթարական խուժանին մեր դէմ հանողը, — նա՛ ցարիզմը, բռնապետութեան այդ հրեշտանման սիւնը, մեր բնկերներին, պրօքետարներին, համառուական նոր ոյժերին, առանց ազգի խորութեան, Սիբերիայի, Նիւսէլլուրգի և Պետրո-Պաւլովսկու զինաների մէջ կտտածահ խեղդող սպանողը: Ո՞վ է Սօցիալիզմի, բանուոր դասակարգի, ժողովրդների ազատագրութեան անբնկրկի թշնամին, — ցարիզմը, որ արեան շաղկապով է թրծել իր Բաստիլները, իր ամբողջական պալատները: — Եւ երբ այս բոլորը մենք գիտենք, և դա ո՛չ թէ դարաւոր, ո՛չ թէ երէկուայ պատմութիւնն է, այլ այն առօրեայ կեանքն է, որի մէջ գործում ենք, մենք չենք որ ամենաչնչին արժէք կտանք Յարկմի ժպիտներին և նրա թունալից

խօսքերին: Բռնապետութեան և նրա մարմնացնողներին չեն հաւատում, նրան թշնամի են նկատում ամէն պարագայի տակ՝ մինչև վերջ, մինչև վերջնական խորտակում:

Հայ ժողովուրդը համախմբուի՝ իր բանակների մէջ, «արտաքին թշնամու» դէմ բալլի, — որպէսզի յետոյ, աւելի թուլացած, Յարկմի խաղը խաղալուց յետոյ, աւելի զիւրին կեր լինի և կամ աւելի հեշտութեամբ ջնջուի, հէնց իր լարած որոգայթներով. շնորհիւ: Այդ երազը երազ էլ կմնայ: Յարկմի պրօքտմը մեր նորոտակներից մէկն է, մենք նրան ձեռք չենք կարող տալ՝ ո՛չ մի պայմանի տակ:

Ուզում է Հայկական Դատ պաշտպանել, — խօսքերը դեռ հերիք չեն, մենք նրան պիտի տեսնենք գործի մէջ:

Իր բաղկին վրայ Հայկական Դատ ունեցողը ցանկան խարդաւաններովը չէ, որ պիտի առաջնորդուի. — նա կունենայ իր ուրոյն ուղիւն և նրան էլ կհետեւի յամառօրէն: Եւ Հայ ժողովրդին կմնայ նորից չխաբուի, և իր պատմութեան տուած հիմունքներին վրայ կենալ ու Յեղափոխական Դործին ոյժ տալ ամենամեծ չափով, առանց խաբուելու ցարիզմի նորագոյն ժպիտներից:

Իսկ ի՞նչ է կատարում սահմանի միւս կողմը. — այն՝ ինչոր քսան տարիից ի վեր Հայ Յեղափոխականը անդադար մատնանիչ է: Թուրք ազգայնական քաղաքականութիւնը անկաշիւանդ կերպով, օրը ցերեկին, ամենքի աչքի առաջ գործադրում է այն, ինչոր չափարարել է անհրաժեշտութիւն՝ երկար տարիներէրից ի վեր — Հային պէտք է ջնջել, նրան պէտք է քանդել, ոչնչացնել, անդարձանելի տկարացման մէջ դնել, Օսմանեան պետական շահերի տեսակէտից: Մի անգամ երբ Բռնապետութիւնը իր միայն շահերի տեսակէտից հաջաջումը իրեն ծրագրին է դարձրել, նա այդ ծրագրի գործադրութեանն էլ դիմում է ստեղծելով, առաջ բերելով ամէն տեսակ պատրուակներ: Եթէ Հայը իրեն շղթաների և անուրի մէջ դնի, եթէ նա ստրկացման ամէն արտաշատութիւնների մէջ մտնի — դարձեալ նրան մահ է սպառնում, այդպէս է դատել, այդպէս է վճռել Թուրք Բռնապետութեան գաղափարաբանութիւնը: Մի՞թէ այդ նկատմամբ որ և է կասկած ալիս կարող է տեղի ունենալ, քանի որ Բռնապետութեան սիւները ո՛չ մի առիթ չեն փախցնում որոշ, դրական կերպով այդ ձգտումի յարատե գոյութիւնը, նրա իրականութիւնը ցոյց տալու: Ամբողջ Հայաստանը բանակատեղի է դարձել և Հայ ժողովուրդը այն թիրախը՝ դէպի ուր յամառ և յարատե կերպով ուղղուած են համըղական սպանողը: Չմոսց ալիս չարչարանքի, քանդումի գործի որ և է նրբութիւն, որ Հայ ժողովրդի պիտովը չանցնէր. — բարբարոսութեան շրջաններից քստմեկի շատ օրինակներ էին մնացել յետնորդներին լուսաբանելու թէ ինչ ասել է մարդկային գաղափարութիւն և նա ինչ

չերի՝ ընդունակ է. բայց դասական բարբարոսութիւնը անգամ դեռ դաս առնելիք ունի՝ այսօրուայ սուլթանական գործընթացը, — դեռ բռնած, տեսնուած չէր մարդկանց կենդանի կենդանի «սղոցելը», և այդ էլ կատարուած է այս դարու մէջ, մեր աչքի առաջ: Կասկածի ամենափոքր նշոյլը անգամ մնացել է, որ Սուլթանականութիւնը ցոյց տուած չլինէր թէ Հասապանութիւնը իր է՛ն սիրելի, է՛ն փայտալիչ գործն է. ապացոյցները պակասութիւն ալլա թողե՛լ է:

Եւ Պատմական այս վճռական բողոքների մէջ՝ ի՞նչ են անում, ի՞նչ են մտածում անել նրանք, որոնք սակայն մի առանձին պարծենկոտութեամբ այդ ժողովրդի անունովն են խօսում և նրա անկեղծ մշակը, նրա գործիչ լինելն են իրենց յայտարարում: — Նրանց դիրքը պարզ է: Ամէն ինչ այդ «երջանիկ»ների Համար վերջացած է, նրանք անձնատուր են եղել կուլտուրական զարգացման գործին, նրանք մտածում են Հայ գեղարուեստը բարձրացնել, Հայկական թանգարաններ հիմնել, և այդ բոլորը ճիշտ այն ժամանակին, երբ սպանում են այն ժողովրդին, որի կուլտուրական և գեղարուեստական Հիմնարկութիւնների անունովն են խօսում: Երկու ծայրայեղ Հակասութիւնները, ըստ Հեգելի, ծիծաղի առիթ են տալիս — և այդ երանելի, այդ գերազանցօրէն արգահատելի վիճակի մէջ է գտնուում այն երիտասարդութիւնը, բառերի յետև պատկերացող երիտասարդութիւնը, որ սիրում է խօսքեր արտասանել. բայց երբ բողոքն պահանջում է խօսքը դործի փոխել՝ նա տատանւում, երեւում և առնականութիւնից իրեն դուրկ լինելն է յայտարարում: Կոտորում է մի ամբողջ ժողովուրդ, նրա առաջն է կանգնած Սուլթ, Սուլթանի բանակը, և այդ ճգնաժամային վայրկեանների մէջ Հայ պոռտուխօս երիտասարդութիւնը, իր սեպակական պարտեզի բարգաւաճման մասին միայն մտածող երիտասարդութիւնը, Հոգեւոյ ամենայն անդորութեամբ զբաղւում է մի մեծ գործով, և այդ մեծ գործն է — մի գործ որ ամբողջ Հայութեան ճակատագրի վրայ պիտի ազդի — Կաթողիկոսական ընտրութիւնը: Մի տիրացու երիտասարդութիւն կարող էր այս ժամանակներում ուրիշ առելի մեծ գործով պարապելու: Հազարաւոր տարիների կեանքը ցոյց տուեց, թէ Կաթողիկոսական Հաստատութիւնները — դրանք ալլա մեռած են, նրանք չեն, որ կարող պիտի լինին ամենափոքր չափով իսկ լուծում բերել այն բարդ խնդիրներին, որ մեր առաջն են դրուած: Եւ սակայն մեր տիրացու երիտասարդութիւնը դեռ Հայկական յամառութեամբ ձգտում է ժամանակի անիւք յետ դարձնել և կղերական փեշերի տակ մտնել, առանց պատմութիւնից խրատուած լինելու, որ նոյն այդ կղերական փեշերն են, որ Բռնապետութիւնների ամենամեծ զօրավիգներն են եղած և նր-

անց Հետ գործակցած՝ ընդդէմ ժողովրդի: Դեռ այդ Հերիք չէ, բառերի Հետ խաղացող մեր երիտասարդութիւնը, — և բուրժուա երիտասարդութիւնից ուրիշ բան սպասել չէր կարելի — տակաւին Հկարողացաւ մարտել գոյութիւնը այն անձինքների, որոնք զալիս են երբեմն իրենց խթանելու և իրենց երեսն անցրած թանձր դիմակը վար առնելու և տակու որ դուք խեղկատակ կեղծաւորներ էք, որ դուք խօսում էք ժողովրդի Համար և ժողովրդի անունով ճիշդ այն ժամանակին, երբ դուք միայն ձեր Նսւի, ձեր Հանգստութեան, ձեր շահագործութեան Համար վաճառքի էք Հանում նոյն այդ ժողովուրդը:

Ընդհանուր փոթորիկների, քաղաքական բուռն ալիկոծումների մէջ կուլտուրական Հաստատութիւնները և ձգտումները չեն, որ արդիւնք են տալիս և օգտակար Հանդիսանում — այլ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ, և միմիայն յեղափոխական գործունէութիւնը: Նախ խորտակել բռնակալների լուծը, ստեղծել պայծառներ, հիմունքներ, որպէս լի աշխուհետե կարելի լինի կեանքի գեղարուեստական կողմերի վրայ մտածելու: Եւ եթէ Հինի ու Նորի ընդհանուր մրրկի մէջ գտնուում են մարդիկ, որոնք օգնութեան չեն Համարում մարտի դաշտը արձանացող ժողովրդին, և սովաշն իրենց թոյլ են տալիս այդ ժողովրդի անունով խօսելու, ալլա երկար փաստերի կարիք չկայ Հաստատելու Համար, որ այդպէս խորհողները, այդպէս մտածողները, այդ ուղղութեամբ գործողները այն բուրժուաները, և այն բուրժուաների պաւակներն են, որոնք յանոսի երես ունին և ընդունակ են միայն իրենց տաքուկ անկիւնների մասին մտածելու: Նոյն իսկ ամենասատիկ փոթորկալից օրերում: Եւ դա չի՞ դալիս ասելու, որ բուրժուան բուրժուայ է, որ նա իր դասակարգային շահերից դուրս չի գալ ո՛չ մի բանով, որ նա ընդունակ է ի հարկին միանալ, Հանրական գործ կատարել նոյն իսկ ամենաճիւղաղային Հաստատութիւններով գինուած Բռնապետութեան Հետ, երբ իր շահը այդ պահանջում է: Ու սրանց վրան է, որ կարելի պիտի լինի յոյս դնել, սրանցից է որ կարելի պիտի լինի մի բան սպասել: — Ո՛չ և ո՛չ: Ժողովուրդը, աշխատաւոր ժողովուրդը, բռնապետութեանց անմիջական ճիրանները իր ուսերի մէջ զգացող ժողովուրդը, մարտի դաշտը դուրս եկող ժողովուրդը ինքն է միայն, որ իր մասին պիտի խորհի, իր գործը առաջ պիտի տանի, Համոզուած լինելով, որ յաղթութեան պարագային բուրժուապական երիտասարդութիւնը կբերի իր կեղծ ժպիտը, իսկ պարտութեան պահուն՝ իր արհամարհանքը: — ո՛չ, միայն այդ չէ՛, այլ այդ պարագային նա Հանդէս կը բերի և՛ իր բուրժուապական փիլիսոփայութիւնը, իր խրատական և բարոյախօսական դասերը:

Եւ այս բոլորից յետոյ՝ ինչո՞ւ միշտ և ամէն պարագայի տակ անպայման կերպով աչքի առաջ չունենալ պատմութիւնը այնպէս, ինչպէս որ նա

երևան է եկել՝ ամէն տեղ և ամէն ժամանակ:

Սահմանի երկու կողմումն էլ ո՛վ է անմիջական բռնութեան զոհը, ո՛վ է կռուի դաշտը արձանացողը, — աշխատաւորը, գործաւորը, բանուորը, հասարակ ժողովուրդ՝ ընդհանուր անուն կրողը: Եւ երբ այդ այդպէս է, ապա սահմանի երկու կողմումն էլ կռուող ժողովուրդը հաւատարիմ և անշեղ մի ուղի ունի միայն բռնելիք, — դա չեղափոխութիւնն է. սա է միակ միջոցը, միակ ճանապարհը, որ սահմանի երկու կողմերում նա պէտք է աշխատի զօրեղացնել և իրեն դերի մէջ դնել: Կռուող ժողովուրդը, զրկուող ժողովուրդը, միայն և միայն դէպի այդ կողմն է, որ պիտի ուղղէ իր ճիգը, իր ամբողջ թափը:

Հերիք է, որքան պահպանողական և բուրժուա տարրերը իրենց շահադիտական խաղերով ժողովրդին մոլորեցրին. — ժողովուրդը վերջապէս ստույգ հասկացողութեան պիտի գայ և ինքն իր գործը, իր չեղափոխական գործը ձեռք առնի, և իր աշխատութիւնը բացառապէս դէպի այդ կողմը դարձնի:

Երկու Բռնապետութիւններ, սահմանի մէկ և միւս կողմում, իրարու հետ մրցում են աղատագրութեան ձգտող հայ ժողովրդին սպանելու՝ որպէս ժողովուրդ: Երկու կողմումն էլ բռնապետութեան անմիջական զոհն է բանուորը, վաճառական, գործաւորը՝ արտադրող գտակարը — և սրանց դիրքը պիտի լինի պատմական այս բոլորեցրին մէջ չհեղուկ երկրորդական խնդիրներով, չլսել կոկորդիլոսի արցունք հոսեցնողներին, և իր ուշքն ու միտքը, իր գործունէութիւնը բացառապէս ուղղել դէպի չեղափոխական գործունէութիւնը: Այդ գործունէութիւնն է, որ իր լայն ծաւալը պիտի առնի սահմանի երկու կողմերումն էլ, — փրկութիւնը միայն նրա մէջ պիտի որոնել. մնացած ամէն ինչ խաբուսիկ է:

### ՖԵԴԵՐԱՑԻԱ ԵՒ ԹԻԻՐԲԻԱ

Ոչ մի բան այնքան դժուար չէ, որքան ուրիշ երկրների քաղաքական փոփոխութիւնից ուղղակի փաստեր առնելը: Անմիջական հետազոտութիւններ հասնել ուրիշ երկրի սահմանադրական մասնաւոր կարգադրութեան կամ քաղաքական սահմանադրութեան յարաբերութիւնից կամ անշարժութիւնից, — դա հազիւ թէ խելացի մի գործ չի լինի, որովհետեւ սահմանադրութիւնները այնքան շատ տեսակներով են իրարուց տարբերում, որ չի կարելի ապահովաբար ասել թէ այն ինչ որ քաղաքականում կամ խաւրում է ուրիշ երկրի սակ էա ուրիշ հողի վրայ, նոյնն

էլ կարգաւանդի կամ կիսաւրի մի ուրիշ երկրի մէջ էլ:

Ամերիկեան շատ հասարակական ուրիշ արդիւններ կ'ապին, եթէ նրանք Անգլիա փոխադրուէին, ու դա հակառակը: Ինչպէս որ հին աշխարհի քոյսերը եւ կենդանիները Ամերիկայի մէջ փոփոխութեան են ենթարկւում, նոյնը կ'ընեն եւ քաղաքական հասարակական երկրի միասնաւոր՝ եթէ Անգլիայից այնտեղ փոխադրուէին:

James BRYCE

Աւելի հասուն յոյսումներն են շփում ունեցող՝ երիտաւար մի ժողովուրդ կարող է իր երակէսը ունենալ այնտեղ, ուր որ ուրիշները կանգ են առել, եւ դա հաւան էլ նա աւելի առաջ պիտի երթայ: Իր միասնական կիսի այնտեղից, ուր որ ուրիշներինը վերջացել է:

HERDER

Մի շարք գրութիւններով մենք ծանոթանալու ենք յարատեւող այն երեւոյթը, որ գոյութիւն ունի Թիւրքիայի մէջ, — այն, որ Թիւրքիայի համապետական կեանքը ներկայացնում է անաճ բողջացման (désintégration) ընդհանուր շղթայ՝ մի քանի դարերից ի վեր. այնպէս որ Թիւրքիան, որպէս պետութիւն, ո՛չ թէ դէպի անաճ բողջացումն (intégration) է զիջում, այլ դէպի անաճ բողջացումն: Պատմական այդ երեւոյթը արտայայտուել է հետեւեալ ձեւերով:

Ա.—Եւրոպական Մեծ Պետութիւնները՝ իրարու հետ միացած կամ առանձին առանձին՝ Թիւրքիայից պատահներ են փրցրել. այսպէս՝ Աստրիան, Ռուսիան, Անգլիան, Փրանսիան կտրել, իւրացրել են հողովին տարածութիւններ, որոնք երբեմն պատկանում էին Թիւրքիային: Այդ երեւոյթը տեղի է ունեցել ո՛չ միայն անցեալի մէջ՝ այլ նա գոյութիւն ունի այսօր իսկ՝ նոյն չափով և Թիւրքիան օրգանական կեանքի մի երեսն է կազմում: Այդ պետութիւնների և Թիւրքիայի փոխադարձ յարաբերութիւնները, այդ տեսակէտից, բնաւ փոփոխութիւն չեն կրել, և անաճ բողջացման երեւոյթը, այդ ձևի տակ, շարունակում է իր կենսական ուժի լուծումը պահել. — որովհետեւ երեւոյթը յառաջացնող զրկւած պատճառները կան և գործում են:

Բ.— Անաճ բողջացման երեւոյթը արտայայտուել է բաժանումով, անջատականութեամբ (սեպարատիզմ): Թիւրքիայի բազմազան ժողովրդները իրենց ճակատագիրը բաժանել, զատել են այդ Բռնապետութիւնից և դադարել են նրա ծաւալ լինելուց, ինչպէս որ առաջ էին: Այդ երեւոյթը մեծ չափով գոյութիւն է ունեցել անցեալի մէջ, որովհետեւ երբեմն Թիւրքիային պատկանող Սերբիան, Յունաստանը, Ռումինիան, Բուլղարիան անջատուեցին և կազմեցին առանձին, անկախ պետութիւններ: Պատմական այդ հոսանքը դադար չի առել, նա շարունակում է գոյութիւն ունենալ այժմ էլ և, որ աւելի նշանակալիցն է, ո՛չ միայն բրիտանական ազդութիւններն են որ անջատականութեամբ են ձգտում են յոյց տալիս, այլն ծախսեղափոխական ժողովուրդներն իսկ: Արաբիան՝ որ առել է Թիւրքիան ծաւալելու իւր լուծումը, որի ձեռքն է կեղծանայել Թիւրքիան ծաւալը աշխարհը, այսօր նա բացառապէս ձգտում է յոյց տալիս դէպի անջատականութիւն:

թիւն, և այդ գաղափարը նրա գործունէութեան և շարժումների թելադրիչ ուղին է կազմում:

Գ.— Ի ն ք ն ա վ ա ր ու թ իւ ն ը մի ձև է, որով նոյնպէս, հանդէս է եկել պատմութեան ընթացքում՝ անամբողջացման երևոյթը: Լիբանան, Սաճոն, Կրետէ, սրանք երբեմն թիւրքիայի կեդրոնական իշխանութեան անանջատ մասնիկն էին կազմում. այժմ, սակայն, այդպէս չեն, նրանք ունեն իրաւունք անորինելու իրենց աւելանալիս գործերը: Երեսօթը շարունակում է գոյութիւն ունենալ, որովհետեւ ուրիշ ազգութիւններ, ի թիւս որոց և՛ Ալբանացիները, այսօր Ի ն ք ն ա վ ա ր ու թ իւ ն ը իրենց անմիջական ձգտումն առաջին առարկան են դարձրել: Իսկ Մակեդոնիայի Ի ն ք ն ա վ ա ր ու թ իւ ն ը իրաւունք ձեռք բերելը ժամանակի խնդիր է միայն. իրերը այդ կողմից այնքան բացորոշ ուղղութիւն են առել, որ այդ մասին վիճաբանելն անգամ ժամանակի կորուստ պիտի լինէր:

Ուրեմն, այսօր, ինչպէս և երէկ, թիւրքիայի բոլոր մասերում, լինի Ասիայում, լինի Եւրոպայում, լինի քրիստոնէայ, լինի ծագողական ժողովրդների մէջ, անամբողջացման երեւոյթը շարունակում է գոյութիւն ունենալ իր երեք ձևերով: Խնդիրն այն չէ, թէ այդ ժողովրդներից ո՞րը, ե՞րբ և ի՞նչ չափով կարող կը լինի իրականացնել իր ձգտումը, խնդիրն այն չէ, թէ թիւրքիայի ո՞ր մասերում Ի ն ք ն ա վ ա ր ու թ իւ ն տեղի կունենայ, կամ ո՞րը կանջատուի և կամ նրա ո՞ր մասը այս ու այն պետութեան ձեռքը կանցնի, — այլ խնդիրն այն է, որ այսօր էլ թիւրքիայի համապետական կեանքը դէպի անամբողջացումն չէ անգլղուած, այլ դէպի անամբողջացումն:

Անամբողջացման երևոյթի գոյութիւնը և թրքական համապետական կեանքի դէպի այդ ուղղութիւնը հոսանք առնելը աւելի կարկառուն կերպով դուրս բերելու և աւելի շօշափելի դարձնելու համար՝ մենք մատնանիշ կանենք յարակից երկու ուրիշ երևոյթների վրայ էլ, որոնք հետևանք են առաջին երեք ձևերին և նրանց արդիւնքը կազմում:

Ա.— Թիւրքիայի ընդհանուր բարեկարգութեան խնդիրը կրել է կատարեալ ֆիսիկօ (անյաջողութիւն): Այդ խնդիրը, թիւրքիայի պատմութեան ընթացքում, մի քանի անգամ հրապարակ է դրուել և չեն պակասել գործոն ոյժեր էլ, լինի արաբներն, լինի ներքին, այդ գաղափարը իրականացնելու. բայց կատարուած ամէն փորձերից յետոյ՝ նա լրիւ անյաջողութեան է բաղտել և դրական ո՛չ մի արդիւնք չի սուել. այնպէս որ թիւրքիայի ընդհանուր բարեկարգութեան խնդիրը դարձել է այլևս մի բրածոյ առարկայ, որ անցեալի յիշատակ է կազմում և ներկայումս գոյութեան իրաւունք չունի, և այդ այն պարզ պատճառով, որ նա կենսականութեան, աճեցման և բեղմնաւորման պայմաններ չի ունեցել և չունի այժմ էլ՝ ի հարկ է ընդհանուր բարեկարգութեան խնդիրը առնելով իր հին ձևի մէջ: Թէ ինչո՞ւ այդպէս է եղել, — մենք այդ մասին չէ որ այժմ խօսում ենք, այլ մենք մատնանիշում ենք միայն եղած, կատարուած իրողութիւնը, գոյութիւն ունեցող պատմական փաստը, իրերի հետևանք եղող երևոյթը: Երբ մի պետութիւն ընդհանուր բարեկարգութեան ձեռնարկ է անում մի քանի անգամ և անյաջողութեան է բաղտում, — և զլստլին սխալ է այդ անյաջողութեան պատճառը արտաքին խոչնդոտ ոյժերին վերագրելը — երբ ինքը դեկավարի չ'ոյժը իսկ խոտովանում է որ ընդհանուր բարեկարգութեան խնդիրն անկարելի է, և դրա համար նա փաստեր է սուել, ու միակ միջոցը համարել է, իրեն կամքին հակառակ, մասնակի բարեկարգութեան սխտեմը, — դա արդէն պարզ ապա-

ցոյց է այդ պետութեան դէպի անամբողջացումն զիմելը: Դա աչքառու մի փաստ է, պատմական մի իրողութիւն, որ արհամարհել, չտեսնելու զարկել չի կարելի նրա համար՝ ո՞վ պարապում է պետական և հասարակական խնդիրներով:

Բ.— Դէպի անամբողջացումն զիմող երևոյթի պարզապետութեանը նպատակ է մի ուրիշ իրողութիւն էլ, որ դարձեալ բխում է թիւրքիայի պետական իրականութիւնից, — այդ այն է՝ որ երթալով, հեռագհտէ թիւրքիան աւելի ու աւելի կախումն է ունենում Եւրոպական պետութիւններից: Այսօր թիւրքիայի պետական իրաւունքները, կարելի է ասել, ամբողջապէս անցել են Եւրոպական վեց Մեծ պետութիւնների ձեռքը: Տնտեսապէս, ֆինանսապէս անկախ թիւրքիա գոյութիւն չունի. նա մի երկիր է, ուր իսկապէս տիրում է համատիրապետութեան (condominium) իրաւունքը: Արաբներն մի հաւաքական ճարմին՝ վեց Մեծ Պետութիւնները, նրա ամէն մասերի մէջ իրենց տիրապետող շօշափելիքները տարածել են՝ տնտեսական և ֆինանսական շահագործութեան բոլոր ձևերի տակ: 1896-ին մի քայլ էր մտացել, որ Եւրոպական վերաւսուցութիւնը (կոնսորցիւմ) ընդունուէր թիւրքիայի ամբողջ ելեւծուաքի վրան, և այդ թուականից մինչև այսօր թիւրքիան ո՛չ թէ դէպի անկախութիւն զիմելու իրականութիւն է ցոյց տուել, այլ՝ ընդհակառակը, նա երթալով աւելի ու աւելի է խրուել կախման պայմանների մէջ: Եւ մի՞թէ սա պարզ հետևանք է միանգամայն ապացոյց չէ այն բանին, որ թիւրքիան, որպէս պետութիւն, որպէս օրգանական մի մարմին, որոշ կերպով զիմում է դէպի անամբողջացումն:

Սրանից յետոյ մատնանիշենք պատմական ուրիշ իրողութիւններ էլ:

Անամբողջացման այս երևոյթի հանդէպ ի՛նչ մտածումներ, ի՛նչ գաղափարներ են յղացել թիւրքիոյ բախտը վարողները. ի՛նչ հիմունքներ, ի՛նչ նոր իրողութիւններ են նրանք ձգտել հրապարակ բերելու, որպէսզի անամբողջացման առաջն առնեն և թիւրքիան շարունակի իր գոյութիւնը պահել, որպէս պետութիւն, որպէս օրգանական մի ամբողջութիւն, առանց որ և է բաժանականութեան:

Առաջին գաղափարը, որ յամառ կերպով այդ ուղղութեամբ երևան է եկել և որի պաշտպանը, թելադրիչ ուղին և ստեղծիչ ոյժն է հանդիսացել թիւրքիայի ղեկավարիչ դատակարգը, — դա պա՛նիսլամիզմն է: Պանիսլամիզմը, իսկապէս, թուրք նացիօնալիզմի ուղին, էութիւնն է կազմում: Պանիսլամիզմը և նացիօնալիզմը՝ դրանք իրարու լրացնող, իրարու ոյժ, գորութիւն տուող (corroborer) գաղափարներ են: Պանիսլամիզմը լոկ կրօնական գաղափար չէ, ինչպէս համաքրիստոնէութիւնը, ո՛չ, նա խորապէս և հիմնապէս քաղաքական գաղափար է: Արդ՝ պանիսլամիզմը, ուրեմն և թուրք նացիօնալիզմը, էապէս, անհրաժեշտօրէն իր մէջ բովանդակում է ցեղի և կրօնի յորդացած ստեղծութեան գաղափար: Որ այդ այդպէս է, — դրա ապացոյցը մեզ տալիս է, աւելի շօշափելի կերպով, եղիպտական նացիօնալիզմը: Դէպի ո՞ւր է ձգտում եգիպտական նացիօնալիզմը, — նա չի բաւականանում քաղաքական ամենալայն իրաւունքներ ձեռք բերելով միայն, նա նպատակ չունի եգիպտական իսլամ ժողովրդի ընկերային կեանքը դնել Եւրոպական քաղաքակրթութեան արահետի մէջ, ո՛չ, այլ նա՝ ամէն բանից վեր, ձգտում է միանալ թիւրքիայի հետ և նրա ամբողջութեան մէկ անբաժան մասը կազմել: Նոյնը և այլ տեղերի պանիսլամական շարժումների մասին, այնպէս որ պանիսլամիզմը և նացիօնալիզմը, դրանք իրարու լրացնող ոյժեր, գաղափարներ են: Եւ ի՛նչ է պանիսլամիզմի, հետևաբար և թիւրք նացիօնալիզմի հիմ-

նական սկզբունքը, — աշխատել վերակենդանացնել Իսրայել. իսկ՝ դա՝ ճիշտն է, որ նպատակ ունի 20-րդ դարում վերակենդանացնել, կեանքի ղեկավարիչ ոչ թե դարձնել այն սկզբունքները, որոնք սրանից հազար տարի յառաջ նշանակում էին ղեկավարելու նախնական ճիշտությունը կեանքը: Իսլամական բոլոր երկրներում կատարված վերջին շարժումների՝ մասին ձենք առանձին կետեր, և փաստացի կերպով՝ յոյց կտանք այն անմիջական կապը, որ՝ «Երիտասարդ թիւրքերն» ունի Եւրոպայում հրատարակող բոլոր այն հանդէսների և թերթերի հետ, որոնք պոստիւլամական դրոշմ են կրում:

Արդ, թիւրքիայի ղեկավարիչ դատակարար ինքը պահիւլաճական գաղափարի իրադրոճման է հետապնդում թէ՛ թիւրքիայի՝ սահմանների մէջ և թէ՛ դուրսը. ու քանի որ պանիսլամիզմը և ցեղային ու կրօնական խտրականութիւն միմեանցից անանջատ գաղափարներ չեն, և նրա նպատակն է պետական կեանքը դնել ինքնամեծ ուսուցման հիմունքների վրայ, որքան որ դա կարելի է, ասել է որ՝ դա՛ էլ քրիստոնէից ճիշտ փաստ է թիւրքիայի ղեկի անամբողջացումն տանող հոսանքին, քանի որ ոչ-իսլամ տարրը դուրս պիտի մնայ այդ բաղադրութիւնից կամ նրան պիտի ենթարկուի:

Բ. — Ի՞նչ է «Երիտասարդ թիւրքիայի» գերադասութիւնը քաղաքական ձգտումը, — այն՝ որ սահմանադրական (parodie) հաստատուն պահուի իսլամ աստուրիի գերիշխանութիւնը: Եւ այս թէ՛ իրականացման ձգտումն իսկ իր մէջ անփոփոխ է, դարձեալ, ասած բնական մի՛ միտք. ուրիշ խօսքով՝ այդպիսի ճիշտ գաղափարի իրադրոճումը պիտի շարունակի յարատեւ դարձնել՝ անսահման ընթացքով երկայնի գոյութիւնը, նրան պիտի տայ իր արդէն ունեցած կենսականութիւնը:

Ուրեմն թիւրքիայի մէջ գործող թուրք թէ՛ Հին և թէ՛ Նոր պիտքը իրենց քաղաքական հաւատածքով ոչ թէ անբողջացուն են բերում, այլ անսահման ընթացքով:

Եւ ձենք այդ բոլոր ձգտումները վերլուծելով, պատմական փաստերի վրայ կեցած, ասել ենք և ասում, որ ուրիշ հնարանութիւն չկայ, եթէ ոչ այն, որ թիւրքիայի մէջ գործող — համապետական թէ՛ դուրս — քաղաքական ոչ-մերը կամայ ակամայ ստիպում, հարկադրում են, եթէ չեն ուզում արհեստական ճիշտ կատարել, եթէ չեն ուզում իրենց՝ յունական տեղեր, եթէ՝ ցանկանում են իրական և յարատեւ ճիշտ գործ կատարել, — նրանք անհրաժեշտօրէն պիտի կանգնեն պատմական փաստերի վրայ. իսկ այդ փաստերը ասում են, որ թիւրքիայի մէջ գործել և արդիւնք յառաջացնել ուզող ամէն կուսակցութիւն ուղիղ ճանապարհով քայլած կլինի միայն այն ժամանակ, երբ թիւրքիայի բաղադրուցից աղբյուրների ինքնավարական իրաւունքը իր քաղաքական գործունէութեան առաջին անկիրաքարը կդրանի: Ինքնավարական գործիւնը ուղղակի բղիւժ է թուրք պետութեան կեանքից, նրա կազմից, այսպէս ամէն ձգտում լոկ ձգտում էլ կմնայ: Ի հարկէ՝ մեր խօսքը այն պարագայի մասին է, երբ գործոն ուժերը ուղղում են թիւրքիայի գոյութիւնը, որպէս պետութիւն, պահում տեղեր: Հակառակ ուղին պիտի տանի ղեկի բացարձակ անջատումն, ուրեմն և թիւրքիայի անկումը՝ որպէս պետութիւն:

Այժմ անցնենք մի նոր խնդրի:

Ղերջեա, թէ հայ և թէ թուրք գործոն տարբերից ամանց մէջ տարած միտք է յղացուել թիւրքիան դնել փէդէրաթիւ (ղաշնակցական) կազմակերպութեան վրայ: Սա էլ մի նոր գաղափար է. բայց խնդիրն այն է,

որ այդպէս մտածողները բացարձակապէս սխալ ուղի են բռնում, գիտակցաբար կամ անգիտակցաբար, և իրենց ընդունած ուղղութիւնից երբէք, ոչ ճիշտ պարագայի տակ, չի կարող յառաջանալ մի թիւրքիա, որ ֆէդերատիւ կազմի վրայ յենուէր, — այդ խնդիրն է, ահա՛, որի մասին խօսել ենք ուզում այս յօդուածի մէջ: Մենք խօսել ենք ուզում դրա մասին, որովհետեւ թիւրքիայի իրականութեան նկատմամբ խօսք եղած ժամանակ, ձենք չէինք ուղիղ զանց առնել նաև այն գաղափարները, որոնք այս և այն կերպով յարաբերութիւն ունին այդ պետութեան հետ: Եւ այստեղ, այսպիսի խնդիրների մէջ, ձենք լիակատար ենք համարում Արիստոտէլէսի մեթոդը: Յայտնի փիլիսոփան այն համոզմունքն ունէր, որ մի երկիր իրականում էր ճանաչելու և գնահատելու համար՝ դուրս բաւական չէր միայն քննութեան առնել՝ այդ երկրի ընկերային կեանքը և արդէն գոյութիւն ունեցող քաղաքական ու այլ կարգի բնակչութիւն ունեցող հաստատութիւնները, այլ անհրաժեշտ էր որ հանդէս բերուէին և վերլուծութեան ենթարկուէին նաև այն բոլոր գաղափարներն ու մտքերը, որոնք ընթացք ունին այդ պետութեան սահմաններում և նրա մէջ եղող հաստատութիւնների շուրջն են դառնում ու ընդհանուր նպատակ ունին փոփոխութեան և ձեւակերպութեան ենթարկելու արդէն եղածը: Հէնց այդ տեսակետով՝ արժէ քննութեան առնել նաև այն մտածողները, որ նպատակ ունի ներկայ թիւրքիան ֆէդերատիւ (ղաշնակցական) պետութեան վերածելու: Արդ, կարելի է այդ կա՛ն դրա համար տարբեր և, որ գլխաւորն է այս պարագայի, ընդունում են դրա համար յարմար ուղիներ եւ գործելակերպեր՝ գէթ նրանց կողմից, որոնք այդպիսի մի մտածողներ իրականացնելու կամեցողութիւնն ունին, — այս է խնդիրը: Եւ որպէսզի դրան հարցը աւելի պարզ է աւելի շօշափելի կերպով երեւան գայ, նախ ասենք մի քանի նախնական տեղեկութիւններ, որպէսզի եզրակացութիւնը աւելի դիւրահասկանալի լինի:

Առենք նախ ժամանակակից պետութեանց ձեւերը, որոշենք թիւրքիայի տեղը և ապա աչքի առաջ ունենանք ցանկութեան առարկան ու այդ առթիւ մեր ասելը:

Ներկայ պետութիւնները, ձեւի և ներքին միահեծանութեան (souveraineté, վեհապետութիւն) տեսակետից բաժանում են մի կողմից՝ ՊԱՐՁ (état simple) եւ ԽԱՌՆ (état mixte) պետութիւնների, և, միւս կողմից՝ ՄԻԱՌԱՅԱՅԱՆ (unitaire) և ԴԱՇՆԱՅԱՅԱՆ (fédératif) պետութիւնների:

ՊԱՐՁ կոչւում է այն պետութիւնը, որի մէջ միահեծանութիւնը բաժանում չէ, այլ պահում է իր կատարեալ միութիւնը (unité): Փոյթ չէ թէ միահեծանութիւնը արտայայտող և իր մէջ կեդրոնացնող լինի մի եզակի անձ, անձերի մի հաւաքականութիւն կամ աւելի մեծ ու նուազ թիւ կազմող մի խումբ, — խնդիրն այն է, որ նա չի բաշխւում, չի կտորակւում, այլ պահում է իր միութիւնը: Միապետութիւնների եւ հասարակապետութիւնների հիմնական տարբերութիւնը հէնց դրա մէջն է կայանում: Զուտ միապետութիւնների մէջ, որ միաժամանակ եւ ժառանգական է, միահեծանութիւնը արտայայտւում է մի եզակի անձի միջոցով. սա ինքն է միակ աղբիւրը, կեդրոնը: Սա է որ իրմով արտացոլացնում է միահեծանութեան վերաբերեալ բոլոր ստորագիծները (attributs): Դրա հակառակ, հասարակապետական ձև ունեցող պետութիւնների մէջ միահեծանութեան ենթակա եւ անուանակիրը հաւաքականութիւնն է: Դեմօկրատական հասարակապետական մէջ ամբողջ ազգն է, որ միահեծանութիւնն է:

ճանուարի 1-ին արտայայտվել է հանդիսանում, մինչդեռ արիստոկրատական և օլիգարխիական հասարակագետությունների մեջ ազգի միայն մեկ մասը, նրա միայն մեկ դասակարգն է, որ միահեծանութունը թիւնք մարմնացնող եւ արտայայտողն է հանդիսանում: Ներկայ պետական ձեւերի այս սահմանադրուծից անմիջապէս աչքի առաջ ունենանք այն, որ Թիւրքիան պարզ պետութիւն է, — այսինքն նրա միահեծանական իրաւունքը, որպէս պետութիւն, ամբողջապէս կեդրոնանում է Սուլթանի մեջ. ուստի միահեծանութեան միակ աղբիւրը և միահեծանական ամէն ստորագիծն է նրա մեջն է մարմնացած: Ուրեմն՝ Թիւրքիայի միահեծանութեան իրաւունքը բաժանուած չէ, այլ կազմուծ է մի կատարելով միութիւն:

Սրանից յետոյ շարունակենք խօսքի թելը: Պարզ պետութիւնների և ֆեդերատիւ պետութիւնների մեջ ծիջին մի ձև կայ, որ կոչւում է Խառն: Նուրազդին ժամանակի սահմանադրական բոլոր պետութիւնները խառն պետութեանց շարքին են պատկանում: Այդպիսի ձև ունեցող պետութեանց մեջ միահեծանութեան արտայայտողը չի հանդիսանում միայն մի եղակի ենթակայ, միայն մեկ անհատ կամ հաւաքականութիւն, այլ մի քանի տարբեր ենթակայներ միասեղ գալով՝ անբաժան կերպով ձառնակցում են այդ միահեծանութեանը, այնպէս որ միահեծանական գործողութիւններ կատարելու համար՝ այդ բոլոր ենթակայների համերաշխող և գուրդնիքայ կամքը բացարձակ անհրաժեշտութիւն է: Այդ ձևի մեջ՝ միահեծանութեան այդ տարբեր ենթակայներն են, մի կողմից՝ մի թագաւոր և, միւս կողմից՝ ազգի մի կամ մի քանի ներկայացուցչական ժողովները, պայմանաւ որ՝ այդ ներկայացուցչական ժողովներից զէթ մեկը ընտրուած լինի ազգի կողմից: Սահմանադրական միապետութիւնը երկու տարբեր տիպ է ներկայացնում: Երբեմն միահեծան ճանչցուած և միահեծանօրէն գործող ազգն ինքն է, որ մի միապետի ընկերակցելու է կանչում իր միահեծանութեանը և՛ այդ պարագային՝ ազգը միահեծանութեան ձառնակի գործածութիւնը ժառանգականօրէն յանձնում, փոխանցում է միապետին և իր ցեղին: Սահմանադրական միապետութեան այդպիսի մի նոյնը մեկ տալիս է Բելգիայի, փետրուար 7, 1831-ի, սահմանադրութիւնը: Երբեմն, առաջին հակառակ, մինչ այդ բացարձակ միահեծան եղող միապետն ինքն է որ՝ աւելի կամ նուազ ինքնաբերաբար, ազգին կանչում է ընկերակցելու իր միահեծանութեանը և իր միահեծանական իրաւունքների մի մասը յանձնում, փոխանցում է այն ներկայացուցչական ժողովին, որոնք ընտրուած են ազգի կողմից: Այդ տիպ միապետական սահմանադրութեան ամենալաւ նմոյշը ներկայացնում է, 31 յունուար 1850-ի, Պրուսիան սահմանադրութիւնը:

Առաջին դէպքում միապետական անձը ունի միայն այն առանձնաշնորհումները, ինչոր սահմանադրութիւնը պաշտօնապէս նրան յանձնել է: Երկրորդ դէպքում՝ ընդհակառակը, միապետը պահում է այն բոլոր առանձնաշնորհումները, որոնցից նա բացորոշապէս ինքը չէ հրաժարուելու: Ուրեմն միևնոյն ընտանիքին պատկանող բաց իրարուց խորապէս տարբերող երկու տիպի միապետութիւններ կան: Առաջին տեսակի սահմանադրական միապետութիւնները, իրաւունքի՝ և հիմնական սկզբունքի տեսակէտից, աւելի են մօտեցնում հասարակապետութեան. մինչդեռ երկրորդ տեսակի մեջ, ընդհակառակը, միապետական սկզբունքը պետութեան հիմնարարն է կազմում միշտ՝ հակառակ տրուած ազատութիւններին:

Այստեղ էլ, միջանկեալ կերպով, անմիջապէս աչքի առաջ ունենանք, որ ձգտողներ կան Թիւրքիան դարձնել սահմանադրական միապետութիւն, այսինքն սուլթանի միահեծանութեանը մի որոշ չափով ընկերականացնել և՛ ազգը՝ իր ներկայացուցչական ժողովներով:

Սրանից յետոյ, շարունակենք մեր խօսքը՝ պետութեանց ձևի նկատմամբ:

Արդ, պետական այն բոլոր ձևերը, որոնց մասին մինչև ցարդ խօսք է եղել, դրանք բոլորն էլ առանց բացառութեան, միաւորական պետութիւններ են (Etats unitaires), որովհետև այդ բոլոր տեսակի պետութեանց մեջ միայն մեկ միահեծանութիւն գոյութիւն ունի, թէև տարբեր ենթակայներ և անուններ ունենալով. բաց էական խնդիրն այն է, որ միահեծանութիւնը, ամբողջ անբրիտանիայի մեջ, իր միութիւնը և ամբողջականութիւնը պահել է:

Եւ սրանից յետոյ պարզ կը լինի երբ ասենք, թէ երբ վաղը Թիւրքիան վերածուելու լինի սահմանադրական միապետութեան, — լինի այդ Բելգիական տիպով, լինի Պրուսական, ինչ տեսակի ներկայացուցչութիւն էլ որ ունենալու լինի, — նա կ'մնայ միաւորական պետութիւն, որովհետև միահեծանութիւնը չի բաժանուել և ամբողջ երկրի մեջ նոյն միահեծանութիւնը երևան կգայ՝ ամէն տեղ և ամէն պարագայի տակ:

Ուրեմն, Թիւրքիան այսօր պարզ պետութիւն է, հետեւապէս և միաւորական, ու եթէ վաղը այդ երկրի մեջ ներկայացուցչական բեթիմ հաստատուելու լինի՝ նա կը լինի խառն և, դարձեալ, միաւորական, — այսինքն մի ձև, որ բոլորովին տարբեր է ֆեդերատիւ ձևից և որից ֆեդերատիւ ձև երբէք չի կարող յառաջանալ: — Այդ կէտը պարզելու համար, բնենք ֆեդերացիան, պետութեանց ֆեդերատիւ ձևը:

Դաշնական պետութիւնը (Etat fédératif, Bundesstat) այնպիսի պետական մի ձև է, որի մեջ ազգային միութիւնը պահելով հանդերձ, ներքին միահեծանութիւնը բաժանուած, կոտորակուած է: Ֆեդերացիան (Դաշնակցութիւն) մի քանի այն տեսակ պետութիւնների բաղկացութիւն է, որոնցից իւրաքանչիւրը սկզբունքով պահում է թէ իր ներքին միահեծանութիւնը, թէ՛ իր սեպհական օրէնքները և թէ՛ իր սեպհական կառավարութիւնը: Մասնաւոր պետութիւնների բոլոր ազգաբնակչութիւնները միասեղ առնելով՝ կազմում է ազգը, ամբողջական պետութիւնը կամ դաշնական պետութիւնը: Դաշնակցական պետութիւնը, նոյնպէս, ունի իր կատարելա կառավարութիւնը. բաղկացուցիչ տարբեր պետութիւնների քաղաքացիները այդ կառավարութեան քաղաքացիներն էլ են: Դաշնակցական Սահմանադրութեամբ՝ ձառնաւոր պետութիւններից մի քանի ստորագիծներ (attribut) առնուած, փոխանցում են Դաշնակցական Պետութեանը: Դաշնակցական Պետութիւնը՝ իր սեպհական միահեծանութեամբ գործած ժամանակին՝ ամբողջ ազգին և ամբողջ քաղաքացիներին պարտաւորութիւնների տակ է դնում: Այսպիսով, Դաշնակցական Պետութիւնը՝ յայտնի նիւթերի՝ մասին ընդհանուր օրէնքներ դրած ժամանակին՝ այդ օրէնքները կա՛մ փոխարինում կա՛մ զուրս են վտարում տարբեր պետութիւններից համանման նիւթերի վրայ եղած օրէնադրութիւնները: Դաշնակցական գործադրական իշխանութիւնը, իր ստորագիծների սահմանների մեջ, բոլորին ուղղակի կերպով է հրաժարում. Դաշնակցական արդարադատութեան տեսանկէտը այդ սրտեմը լրացնում են: Օտար ազգերի հետ ունեցած յարաբերութեան ժամանակին՝ Դաշնակցական իշխանութիւնն է որ ամ-

բողջ ազգն է ներկայացնում. ծանաւոր պետութիւնները աւելի քան միաձայնութիւն չունեն:

Ֆեդերատիւ կազմը աւելի յարմարում է Հասարակապետութիւններին: Այդ նկատմամբ օրինակ կարող են համեմատուիլ նոր Աշխարհի Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգները, Կեղերական և Տիբին Ամերիկայի Հասարակապետութիւնները: Եւրոպայի մէջ՝ 1848-ի Մաճմանորութիւնից յետոյ՝ Զուիցերական երբեմնի Համադաշնակցութիւնը (confédération) այժմ նոյնպէս կազմում է Դաշնակցական (ֆեդերատիւ) Հասարակապետութիւն:

Այդ ձևը միապետական պետութիւններին էլ կարող է յարմարուիլ, — այսպէս, Գերմանական կայսրութիւնը, 16 ապրիլ 1871-ի սահմանադրութեամբ կազմուած, Դաշնակցական մի պետութիւն է, որ բացառութեամբ կազմուած է միապետական պետութիւններից, բացի նախկին ազատ քաղաքներից՝ Լիւբէկից, Բրումից և Համբուրգից, որոնք Հասարակապետական ձև ունին:

Միաւորիչ պետութեան (État unitaire) և Դաշնակցական պետութեան (État fédératif) միջև գոյութիւն ունի պետութեանց միջին մի ձև, որ կոչւում է Համադաշնակցութիւն (confédération)։ Կօնֆեդերատիւ միջին միջին ազգային պետութիւնների մշտապէս մի ընկերակցութիւն կամ մի նիդակցութիւն (ligue), որոնք սակայն միշտ պահուած են իրենց անբաժանելի միաձայնութիւնը:

Բաղկացուցիչ պետութիւնների մէջ, այդ դէպքում, միայն այն ընդհանուր հասկացողութիւնը կայ, հաստատուած, որ նրանք իրենց ոյժերը պիտի միացնեն որոշեալ մի նպատակի, յայտնի շահեր և սկզբունքներ յարգել տալու համար, և այդ ժամանակն է, որ նրանք մշակում են ներքին և արտաքին գործունէութեան կանոններ:

Տարբեր պետութիւնների պատուիրակները միասին են գալիս խորհրդակցութեան համար՝ և այդպիսով Կոնֆեդերացիան արտայայտում է մի ընդհանուր ժողովով: Բայց այդ ժողովը ո՛չ մի իշխանութիւն չունի այդ պետութիւնների հպատակների կամ քաղաքացիների վրայ. նա չի կարող ո՛չ նրանց դատել, ո՛չ հարկադրել, և ո՛չ էլ նրանց վրայ պարտաւորիչ օրէնքներ դնել: Ուրեմն նա ո՛չ գործադրական իշխանութիւն ունի, և ո՛չ էլ դատաստանական. նա չունի նոյն իսկ ճշմարիտ օրէնսդրական իշխանութիւն, որովհետեւ իր անցկացրած որոշումները, զանազան պետութեանց մէջ ոյժ ունենալու համար, պէտք է որ նորից հրատարակուին այդ երկրների վեհապետների կողմից:

Համադաշնակցական պետութիւնները պատերազմի սպառնալիքով է միայն, որ կարող են ըմբոստ պետութեանը հարկադրել իր պարտաւորութիւնները և յանձնառութիւնները կատարելու:

Նորագոյն ժամանակներում՝ Կոնֆեդերացիայի գլխաւոր օրինակ կարող են ծառայել Գերմանական Կոնֆեդերացիան, այն ձեւով, ինչպէս որ նա գոյութիւն ունէր 1815-ից մինչև 1866-ը, և Զուիցերական Կանտոնների Կոնֆեդերացիան մինչև 1798-ը: Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգների պետական ձևը 1777-ին ուրիշ բնատրութիւն չունէր. այդ ժամանակուայ Կոնֆեդերացիայի և յարաւել միութեան՝ յօդուածները այդ տրամադրութիւն էին ստեղծել:

Այստեղ ծանաւոր ուշադրութեան պէտք է առնել այն, որ Պետութեանց Կոնֆեդերացիան շատ հին ձև է և նա միշտ կանխում է դաշնակցական (ֆեդերատիւ) պետութեանը. վերջինս բոլորովին նորագոյն ժամանակի ձև է: Նորագոյն ժամանակում մի Կոնֆեդերացիա յաճախ նախապատրաստութիւն է եղել դաշնակցական (ֆեդերատիւ) պե-

տութիւն յառաջ բերելու, — այդպէս է եղել Միացեալ Նահանգներում, Զուիցերիայում և Գերմանիայում. մեր օրօք այդպէս էլ եղաւ Աստրիայիւում: — Ուրեմն նախ Կօնֆեդերատիւ և ապա ֆեդերատիւ:

Յայտնի պետական անձնաւորութիւն Զէյցս Բրայսը հետեւեալ կերպով է ներկայացնում Հիւս. Ամերիկայի Միացեալ Նահանգների ֆեդերատիւ կազմը 1).

«Ամերիկան Հասարակապետութիւնների հասարակապետութիւն է. թէև շատ պետութիւններից բաղկացած, բայց ընդհանրական (դաշնակցական) պետութիւնը աւելի անհրաժեշտութիւն է բոլորի գոյութեան համար, քան թէ իւրաքանչիւր մասնակի պետութեան գոյութիւնը՝ նոյն իսկ իրեն համար:

«Նրբ քաղաքական մի մեծ համայնքի մէջ փոքրիկ համայնքներ գոյութիւն ունին, փոքրերի յարաբերութիւնը դեպի մեծը, սովորաբար, հետեւեալ մէկ կամ միւս ձևով է երևան գալիս: Դրանցից մի ձևն է համախմբութիւնը (ligue): Այդ ձևով՝ քաղաքական մի քանի մարմիններ — լինին՝ զբաղեցնող միապետութիւններ կամ հասարակապետութիւններ — միասին համախմբուելով՝ յայտնի նպատակների և ընդհանուր պաշտպանութեան համար, կազմում են մի եզակի մարմին: Այդպիսի բաղկացուցիչ մարմին անդամները կամ համախմբուածները (ligue) անհատական մարդիկն են, այլ համայնքներ: Նա գոյութիւն ունի միայն՝ որպէս համայնքների մի կուտակութիւն (aggregate) և հետևաբար անմիջապէս կը ջնջուի՝ երբ բաղկացուցիչ համայնքները իրարուց իրաւամբեն: Նա գործ ունի միայն համայնքների հետ, անհատական քաղաքացիների հետ նա գործ չունի, իրաւունք չունի նրանց հարկի ենթարկելու, դատելու, օրէնքների տակ դնելու, որովհետեւ այդ բոլոր խնդիրների մէջ նա պարտականութիւն ունի միայն իր սեպական համայնքին ենթարկուելու՝ որպէս քաղաքացի: Այդ ձևին օրինակ կարող է լինել Պետական այն ձևը, որ Գերմանական Կոնֆեդերացիան ունէր՝ 1815-ից մինչև 1866-ը: Այդպէս էր նաև դերմանական Hanseatic League-ը (վա առակից քաղաքներ) միջին դարերում. այդպէս էր նաև Զուիցերական Կոնֆեդերացիան՝ մինչև 19-րդ դարու սկիզբները:

«Երկրորդ ձևի մէջ՝ փոքր համայնքները պարզապէս ստորաբաժանումներ են այն մեծի, որ մենք անուանում ենք ազգ (nation): Փոքր համայնքները ստեղծուել, գոյութիւն են ունեցել, միայն վարչական նպատակների համար: Նրանց ունեցած իշխանութիւնները ազգի կողմից յանձնուած իշխանութիւններ են և կարող են լուրջ ազգի կամքով: Այս դէպքում, ազգը գործում է ուղղակի՝ իր սեպական պաշտօնեաների ձեռքով՝ ո՛չ միայն համայնքների, այլ նոյն իսկ սոսկական ամէն քաղաքացու վրայ: Եւ ազգը, որովհետեւ անկախ է այդ համայնքներից, կշարունակի գոյութիւն ունենալ՝ մինչև իսկ եթէ համայնքները չքանային էլ: Այդպիսի մանր համայնքների օրինակներ կարելի է գրտնել նորագոյն Ֆրանսիայի département-ների և անդրկական կոմսութիւնների (Counties) մէջ: Երբեմն՝ անդրկական կոմսութիւնները, օրինակ Գենդ (Kend) կամ Դօրսէթ (Dorset), անկախ թագաւորութիւններ էին, կամ ցեղային գաւառաբաժանումներ (districts), ոմանք էլ արւեստական բաժանումներ էին առաջինից, ինչպէս Բեաֆորշայը (Bedfordshire): Դրանք բոլորը այժմ սեպական վարչական պարզ տարածութիւններ են, և սեպական իշխանութիւնների իրաւունքները յանձնուեցան նրանց՝ անդրկական կառավարութեան, ազգի կողմից: Ազգային կառավարութիւնը այդ ստորաբաժանումների շնորհով չէ, որ կանգուն

1) The American Commonwealth, t. I, գլ. II և IV.

է, նա դրանց կարելի չունի, նրանք ամբողջապէս կարող են քանդուել կամ ամբողջապէս տարբեր համայնքների վերածուել՝ առանց որ իր կողմը դրանից որ և է վնաս կրէր:

Ամերիկեան Դաշնակցական Հասարակապետութիւնը (Federal Republic) այդ ձևերից և ո՛չ մէկին է համապատասխանում, կարելի է ասել, որ նա այդ երկու ձևերի մէջ տեղն է կանգնած: Նրա կեդրոնական կամ ազգային կառավարութիւնը միայն պարզ մի Համախմբութիւն (league) չէ, որովհետեւ նա ամբողջապէս կախումն չունի այն բաղկացուցիչ համայնքներից, որոնց որ մենք անուանում ենք պետութիւններ (states, նահանգներ): Նա ինքն իրեն արդէն մի հասարակապետութիւն է կամ հասարակապետութիւնների մի միութիւն է, որովհետեւ նա անմիջական հնազանդութիւն է պահանջում բոլոր քաղաքացիներից և նրանց բարձր վրայ էլ ազդում է իր գաղափարներով և գործադրիչ պաշտօններով: Մասնաւոր պետութիւնները (states, նահանգներ) իրենց քաղաքացիների վրայ մի իշխանութիւն ունին, որ իրենց սեպհական իշխանութիւնն է և կեդրոնական կառավարութեան կողմից իրենց յանձնուած չէ այն: Այդ պետութիւնները գոյութեան չեն կանչուած կառավարութեան կողմից. որովհետեւ այդ պետութիւններն են արդէն գոյութիւն ունենալիս կեդրոնական կառավարութիւնից առաջ:

Կեդրոնական կամ ազգային (դաշնակցական) կառավարութիւնը և պետական (state, նահանգ) կառավարութիւնները նման են մի մեծ շինութեան և մի շարք փոքրիկ շինութիւնների՝ որոնք բոլորն էլ կանգուն են միևնույն հողի վրան, թէև մէկը միտից տարբեր: Ծառ անգամ տեսնուած է մի այնպիսի բաղկացութիւն, թէ ինչպէս մի մեծ եկեղեցի է կառուցուել մի քանի շատ հին սրբատեղիների վրայ: Հողը առաջին անգամ ծածկուել է մի քանի փոքր շիրիմներով և ծառուներով, որոնք բոլորն էլ շինուած են եղել զանազան ժամանակներում և ունեցել են ճարտարապետական դանազան ձևեր: Այդ շէնքերից ամէն մէկը կառարեալ է իր տեսակի մէջ: Յետոյ՝ այդ բոլոր փոքր շինութիւնների վրայ, և նրանց բոլորն էլ իր ընդարձակածաւալ գրկի մէջ առնելով, կառուցուել է մի մեծատարած տանիք՝ նոր սիւներով: Բաղկացութիւնը կարող է իր սրմերը յենել հիւնքերի վրայ և կամ իր մէջ ամփոփել միւս հին շիրիմների պատերը: Դրանով սակայն, հին շինութիւնների ինքնուրոյնութիւնը չի եղծուել և եթէ մեծ շինութիւնը չքանալու լինէր, մի փոքր վերաշինութիւն բաւական կլինէր, որ տարբեր և անջատ շինութիւնները դառնային այն ինչոր էին առաջ: Այժմայայտ էն ամերիկեան պետութիւնները Միութեան մէջ, և բոլորն էլ նրան ստորադասուել են: Միութեանը պետութիւնների աւելի քան մի կուտակութիւն (aggregate) է և նոյն այդ պետութիւնները Միութեան աւելի քան մասերն են: Միութիւնը կարող է չքանալ, և այդ դեպքում պետութիւնների արդէն ունեցած ստորագիւծների վրայ եթէ մի փոքր նորերն էլ աւելցուեն՝ այն ժամանակ այդ պետութիւնները կարող են վերապրել որպէս անկախ և իրենք իրենց կառավարող համայնքներ:

Նգրակացութիւնների դիմելուց առաջ դեռ նախնական մի հարց էլ մնում է պարզելու, — այդ այն է՝ թէ ի՞նչպէս, ի՞նչ պայմանների տակ, պատմականապէս, ծագում են առել Ֆէդերատիւ ձև ունեցող պետութիւնները:

Առնենք նախ Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգների սկզբնաւորութիւնը:

Երբ Գեորգ III-ի օրօք Բրիտանական Կեդրոնական կառավարութեան և ամերիկեան իր գաղութների մէջ խռովութիւնները և տարաձայնութիւնները իրարու հաւելից սկսեցին պոռթկալ, այդ ժամանակներում Վաշինգտոն Ուիլիամսի

արեւելեան ափերի երկայնութեան վրայ արդէն գոյութիւն ունէին 13 փոքր համայնքներ: Այդ բոլոր գաղութներն էլ իրենց կառավարիչները ստանում էին Կեդրոնական կառավարութիւնից, բացի Կոնեկտիկուտից (Connecticut) և Ռոդ Այլենդից (Rhod Island): Բրիտանական Պարլամենտի գործերը այդ առերեսները այնքան միայն նշանակութիւն ունէին այդ գաղութների համար, որքան որ նրանք այժմ նշանակութիւն ունին Բրիտանական Թագից կախումն ունեցող գաղութների: Գործնականի մէջ ամէն գաղութ ինքնավար մի հասարակապետութիւն էր (Self Governing Commonwealth). նրանք իրենց տեղական գործերը անկախ կերպով անօրինում էին՝ առանց մայր-Հայրենիքի որ և է միջամտութեան: Գաղթադրերից ամէն մէկը ունէր իր սեպհական օրէնսդրական մարմինը (legislature), իր սեպհական օրէնքները. անպիսիական (մայր-Հայրենիքի) հանրական օրէնքները (common law) նոյնութեամբ չէին փոխադրուել այդ երկրներում, այլ նրանք կրել էին ամէն տեսակ յաղաւուսն և աւելացումն՝ նայելով տեղական պայմաններին և պահանջներին: Իւրաքանչիւր գաղութ պիտի կրէր իր աւանդութիւններին, իր հաստատութիւններին և ունէր իր ուրոյն պատմութիւնը: Գաղութների իրանց մէջ փոխադարձ ծանաւոր կապեր և յարաբերութիւններ չկային, նրանց յարաբերութեան փոխադարձ կապը միայն այն էր, որ պատկանում էին մի ցեղի և մի թագաւորութեան, և այս վերջինիս ընդհանուր քաղաքացիներն ու հպատակներն էին համարուած: Երբ Կեդրոնական կառավարութիւնը ճնշւածի ուղին բռնեց, այդ ժամանակն էր, որ բոլոր գաղութները խորհեցին միասին գալ և հաւաքական ընդգրկման օրէնսդրութիւն կազմակերպել: Նիւ-Եօքքի մէջ, 1765-ին, 9-ը գաղութների պատուիրակներ միասին գալով՝ կազմեցին առաջին Կոնգրեսը: Դրան հետեւեց Ֆիլադելֆիայի Կոնգրեսը 1774-ին, ուր ներկայ էին 12 գաղութների պատուիրակներ: Այս վերջին Կոնգրեսի մէջն է, որ ժողովականները խօսեցին բոլոր գաղութներին և գաղափարեցին հռչակել «The Good people of these colonies», որպէս մի ամբողջութեան, մի միութեան: Այդ Կոնգրեսից կազմակերպուած ընդհանուր բնաւորութիւն ստացող՝ յեղափոխական ճարմինը ծագում առաւ և մայր-Հայրենիքի դէմ հաւաքական կռուի ղեկավարիչը դարձաւ: 1776-ին յայտարարուեց բոլոր գաղութների անկախութիւնը և 1777-ին գաղութները ստացան իրենց օրինական բնաւորութիւնը՝ կազմելով «The articles of confederation and Perpetual Union» (Կոնֆեդերացիայի և ճշտական միութեան յօդուածները): Եւ ապա, աստիճանաբար, 1787-ի Միութեան ակտով, յաւաքացու ներկայ Միացեալ Նահանգները, որ ունի Ֆէդերատիւ կազմ և «Հասարակապետութիւնների Հասարակապետութիւն» է:—

Գերմանական ներկայ Ֆէդերացիան կազմակերպուեց 1871-ին: Այստեղ ևս Ֆէդերացիայի տարրերը՝ անջատ պետութիւններ և իշխանութիւններ արդէն գոյութիւն ունէին:

Ջուլիցերական արդի Ֆէդերացիան գոյութիւն առնելուց առաջ, այդ երկրում կար Կոնֆեդերացիայի ձևը, իսկ նրանից առաջ էլ տարբեր միութիւններ, պետութիւն-անհամերկ կային: Այստեղ էլ այն օրինակն է պարզուած, որ Ֆէդերատիւ ձևը յառաջ դալու համար՝ պահանջում է նախնական տարրեր, — այսինքն իրենց անհատականութիւնը ունեցող քաղաքական տարրեր միութիւններ:

Վերադառնանք այժմ բուն խնդրին

Մենք մինչև ցարդ տուեցինք պաշտօնական զխտութեան խօսքը այնպէս, ինչպէս որ նա հասկանում է և ինչպէս որ նա բացատրում է Ֆէդերացիայի էութիւնը և

յառաջ գալու պայմանները 1): Անշուշտ մենք այստեղ չենք կանգնել և չենք կարող կանգնել, սօցիալիստական Հայեցակետի վրայ: Սօցիալիստական սկզբունքով՝ գոյություն ունեցող ներկայ պետական ձևերը, որոնց մենք աչքի առաջ ենք ունեցել, բոլորն էլ՝ միապետական և բուրժուազական, Հիմնուած են դասակարգերի տիրապետութեան և դասակարգային կռուի վրայ: Պետութիւնը ո՛չ այլ ինչ է, եթէ ոչ տիրող դասակարգերի և արքայատոհմերի տիրապետութեան գործիքը: Բայց այս վերջին Հայեցակետով առաջ երթալով չէ, որ կարելի պիտի լինէր խօսել այն խնդիրների մասին, որոնք այս բազէիս մենք աչքի առաջ ունենք բացատրելու, որովհետեւ այն հոսանքը, որ ցանկութիւն ունի Թիւրքիայում պետական ֆէդէրատիւ ձեւ ստեղծել, նա չէ կանգնած սօցիալիզմի սուած Հիմունքների վրայ, այլ նա բռնել է ուզել այն ուղին, որից արդէն անցել են ա՛յլ երկրներ, ա՛յլ ժողովուրդներ և ա՛յլ պետութիւններ, ու զրա համար է, որ մենք էլ հէնց աչքի առաջ ունեցանք այն պետութիւնները և այն երկրները, որոնց օրինակը որ ուզում են փոխապրել և պատուաւանել Թիւրքիայում:

Արդ, մենք ի՞նչ տեսանք:

Առաջին՝ որպէսզի մի պետութեան մէջ պետական ֆէդերատիւ ձեւ յառաջանայ, ամէնից առաջ պէտք է, որ այդ պետութեան, և խնդրոյ առարկայ եղող երկրի մէջ, գոյութիւն ունենայ ազգային գաղափար այն մըտքով, ինչ մտքով որ նա տեղի ունի արդէն եղած երկրներում, — այսինքն ազգ և պետութիւն նոյնութիւն լինին, և ազգաբնակչութեան բոլոր տարրերը, առանց բացառութեան, ընդգրկած լինին ընդհանուր մի Հայրենիքի ու ընդհանուր մի ազգութեան գաղափարը: Ամերիկայի, Զուիցերլանդի և Գերմանիայի բոլոր բնակիչները, որպէս ամբողջութիւն, նկատում են իրենց մի անդամ ամերիկեան, զուիցերական, գերմանական ազգութեան: Խնդիրն ա՛յն չէ, թէ այդ երկրներում ազգութեան Հիմունքները ինչ են կազմում, ինչպէս է, որ նրանք իրենց համարում են մի ամբողջութեան անանջատ մասը, կտորը, անհատը:

Ժրենցին նոյնքան իրաւունքով, և պատմական փաստերի վրայ կեցած, իրեն զուիցերական ազգութեան անդամ է համարում, որքան որ Բերնցին, և այլն: Ֆիլադէլֆիացին, որպէս մի ազգութեան մասը, իրեն չի գտնում Նիւ-Եօրքը: Բաւարացին նոյնքան իրեն Գերմանացի է նկատում, որքան որ Պրուսացին և Սաքսոնացին:

Արդ, խնդիր է, Թիւրքիայի մէջն էլ այդպէս է: — Երբէք: Չկա՛յ, մինչև ցարդ գոյութիւն չի ունեցել Թիւրքական, Օսմանեան ազգութիւն այն մտքով, որով այդ գաղափարը հասկացւում է վերեւ գրուած երկրների մէջ: Թիւրքիայի մէջ պետութիւն և ազգութիւն հոմանիշ եզրեր չեն, մին միւսին լրացուցիչ, մին միւսի տեղը բռնողը չէ: Նոյն իսկ Թիւրքական պետական օրէնքը, որ դարեւոր կեանք ունի, ամբողջ պետութիւնը մի ամբողջական ազգութիւն չի նկատում, այլ ազգութիւնների մի կոյտ, մի ազգութեամբ, մի խմբակցութիւն և զրա համար էլ տարբեր

«մի լլէթնէրի» (ազգեր) գոյութիւնը իր պետական կազմի և օրէնքների Հիմնական մի մասն է նկատում: Ո՛չ միայն պետութիւնը, տիրող տարրը, նոյնն է թէ ասանք դասակարգը, այդպէս է հասկանում իրերի դրութիւնը և նրանց արդէն ունեցած բնութարանը Թիւրքիայում, այլ նոյնն են անում և՛ այդ պետութեան մէջ եղած տարբեր, կողք-կողքի, իրենց կղզիացած, աշխարհագրական վայրերում ապրող ազգութիւնները: — Արաբացին իրեն թուրք կամ օսմանցի չի համարում, որովհետեւ չկայ, գոյութիւն չունի Թիւրքական, օսմանեան ազգութիւն՝ համապետական առումով, ուստի նա իրեն համարում է Արաբ: Հայը, Ֆոյնը... չի ատում, որ ինքը օսմանեան կամ Թիւրքական ազգութեան մի անդամն է, այլ պահում է իր ազգութիւնը, և իրեն որակում է իր սեպական ազգութեամբ: — այդ է իրականութիւնը: Արդարեւ, «Երիտասարդ Թիւրքիա»-ն գաղափար չղացաւ Թիւրքիայի մէջ գոյութիւն ունեցող տարբեր ազգութիւններին քարոզել, որ նրանք բոլորն էլ թուրք, օսման ազգութեան անդամներն են, ուրեմն իրենց պատմական հատկանիշները գաղափարը պիտի թողնէին և ընդունէին ազգութեան այն գաղափարը, ինչոր ունեն գերմանացիները, ֆրանսիացիները, զուիցերացիները: Բայց նա անյաջողութեան բաղխեց և նրա ասածը իրականութիւն չտեսցաւ: Թէ ի՞նչու, — այդ չէ այժմ խնդիրը: Խնդիրն է, որ օսմանեան կայսրութեան մէջ եղող բոլոր ազգութիւնները չեն ընդունած ազգութեան և պետութեան գաղափարի հոմանիշ լինելը, — որովհետեւ օսմանեան հպարտալի է, ուրեմն և օսմանցի է, թուրք է, այս գաղափարը Թիւրքիայի մէջ մինչև ցարդ գոյութիւն չի ունեցել, և չունի: Այն ինչ՝ այդպիսի մի գաղափար արդէն կայ այն պետութիւնների մէջ, որոնք ֆէդերատիւ ձևի են յանգել:

Ուրեմն, որպէսզի Թիւրքիան ֆէդերատիւ ձևի յանգի, նախ պէտք է որ ազգութեան գաղափարը այդ երկրի ամբողջ տարածութեան մէջ, առանց բացառութեան, բոլոր ժողովուրդների և տարրերի կողմից ընդունուի և իրականութեան մասը դարձած լինի այնպէս, ինչպէս որ նա գոյութիւն ունի օրինակ բերում երկրների մէջ: Պարզ է՝ որ Թիւրքիայի պետական ֆէդերատիւ ձեւ առաջ բերելու ամենաառաջին և էական պայմանը պակասում է: Կստեղծուի՞, յառաջ կգա՞յ ապագային այդ պայմանը, — դա այլ խնդիր է, էական կէտն այն է, որ նա այժմ, այս բազէիս գոյութիւն չունի: — այսինքն այդ երկրում պետութիւն և ազգութիւն գաղափարները հոմանիշ չեն:

Երկրորդ՝ Ամերիկեան Միացեալ Նահանգների, Զուիցերիայի, Գերմանիայի օրինակները աչքի առաջ ունենալով, մենք տեսանք, որ ֆէդերատիւ ձևի յառաջանալը պատմական մի երկարատեւ պրօցէսի գործ է: Ֆէդերատիւ ձեւը, այդ երկրներում, չի կազմուել մէկէն ի մէկ, de toutes pièces, ինչպէս ասում են գաղղիացիները՝ այլ արդիւնք է եղել պատմական մի շարք ոյժերի, որոնք այդ ուղղութեամբ են գործել: Բայց դրանից՝ մենք տեսանք որ՝ որպէսզի ֆէդերացիա յառաջանայ՝ հարկաւոր է նախնական տարբեր, իսկ այդ նախնական տարբեր են այն պետութիւնահատները, որոնք արդէն, մինչև ֆէդերացիայի կողմուելը, ունեցել են իրենց ուրոյն կեանքը, իրենց գաղափարութիւնը և եղել են ինքնագոյութիւն ունեցող օրգանիզմներ: Նրանք ունեցել են կա՛մ ինքնավարութիւն, այսինքն իրենց տեղական բոլոր գործերը կարգադրելու օրէնսդրական և վարչական միահեծանութիւն, կա՛մ ուրոյն պետութիւններ են, այս բառի իսկական նշանակութեամբ՝ ինչպէս որ եղել է միապետական երկրներում, օրինակ Գերմանիայում: Ինքնավար և կազմակերպուած մարմինները և ուրոյն անհատականութիւն

1) Այս և սահմանադրական այլ կարգի խնդիրների ուսումնասիրութեան համար յանձնարարում ենք Փարիզի Իրաւագիտական ճիւղի հռչակաւոր պրօֆէսոր Ա. Esmein-ի «Éléments de Droit Constitutionnel Français et Comparé» — յայտնի գիրքը: Պետութեանց բաժանման և սահմանաւորման խնդիրների մէջ մենք ընդունել ենք Էսմէնի տեսութիւնը:

ունեցող օրգանիզմներն են որ՝ պատմական պատճառներով՝ իրարու մօտ եկել և կազմել են Բնդհանուր Պետությունը՝ Ֆեդերացիան։ Եթե Ֆեդերացիան նմանցնենք մի պարսպի, ապա առանձին Համախմբությունները, որ արդեն գոյություն ունեին, պիտի նմանցնենք քարերին և աղիւններին, որոնք միասին գալով կազմել են պարսպը, — շաղախը, այդ դեպքում, բնդհանուր ազգութեան գաղափարն է։

Արդ, Թիւրքիայի մէջ, ներկայումս, կա՞ն այդ տարրերը։ Թիւրքիան զուտ միապետական պետութիւն է։ Եթե Արաբիան, Հայաստանը, Մակեդոնիան, Քիւրդիստանը արդէն ունեցած լինէին իրենց ինքնավարութիւնն ու կամ կազմուած լինէին որպէս ուրոյն պետութիւններ, այն ժամանակ, եթէ պատմութիւնը անհրաժեշտ և կարելի դարձնէր, նրանք կարող էին իրարու մօտ գալ և Ֆեդերատիւ ձեւով իրարու հետ կապուել, ինչպէս որ եղած էին միւս երկրներում։ Բայց Թիւրքիայում այժմս այդպիսի տարրեր բացարձակապէս պակասում են, նրանք չկան, գոյութիւն չունեն։ — աղիւնը, քարը և շաղախը չկայ, ուրեմն ինչո՞վ, ի՞նչ տարրերով է որ պարսպը պիտի շինուի։ Վերեւ բերուած օրինակներից մենք տեսանք, որ Ամերիկեան 13 դաղութները արդէն կազմակերպուած էին՝ որպէս քաղաքական մարմին, նրանք արդէն կային։ Նոյնը և՛ Դերմանիայի և՛ Զուլիգերիայի Համար. և որովհետեւ տարրեր կային, ուստի արդիւնքին կարելի էր սպասել։ Իսկ Թիւրքիայում այդ տարրերը այս րոպէիս չկան։ Դեռ ի՞նչ, ցանկութիւնը, ծրագիրը չերիք չէ։ Հարկաւոր է նախ որ շինիչ տարրերը լինեն։ Եթէ Հայաստանը, Արաբիան, Ալբանիան, Մակեդոնիան արդէն կազմակերպուած քաղաքական մարմիններ եղած լինէին, եթէ նրանք էլ արդէն ունեցած լինէին այն, ինչոր ունեին իրենց միաստույց առաջ մեր օրինակներում խօսող ճանաչող պետութիւնները և ինքնավար երկրները, այսինքն նրանք էլ արդէն ունեցած լինէին իրենց ինքնավարութիւնները, տէր և տնօրինող լինէին իրենց օրէնսդրական և վարչական գործերին, — այդ դեպքում կարելի էր ձգտել բնդհանուր շինութեանը, ֆեդերացիայի իրագործումին։ Բայց երբ Հայաստան, Ալբանիա, Մակեդոնիա, Արաբիա դեռ նուաճուած երկրներ են եւ տեղական միահեծանութեան, թէ օրէնսդրական եւ թէ վարչական որ եւ է ստորուղի, որ եւ է կազմակերպութիւն չունին, այն ժամանակ ֆեդերացիայի գաղափարը կմնայ լոկ փոխ առնով, նմանովի մի գաղափար, եւ անկարելի կլինի փոխադրել այնտեղ, ուր բարգաւաճելու, ունեւանելու պայմաններ չկան։

Ուրեմն, Թիւրքիայում այժմս պակասում են, գոյութիւն չունեն ֆեդերատիւ ձեւի այն տարրերը, որոնց գոյութիւնը հրամայական անհրաժեշտութիւն է, եւ որոնց նախնական գոյութիւնն է միայն հնարաւորութիւն դարձրել ֆեդերացիայի յառաջ գալը այն երկրներում, ուր նա գոյութիւն ունի մեր օրերում։

Եթէ այսօր հրապարակի վրայ ծրագրեր և քաղաքական կուսակցութիւններ կան, որոնք աշխատում են Ասորո-Հունգարիան պետական ֆեդերատիւ ձեւի վերածել, դա մասամբ հասկանալի է, որովհետեւ նա այդ ձեւի համար պահանջուած տարրեր ունի իր ծոցի մէջ։ Հունգարիայի և Ասորիայի մէջ եղած Լանդտագային սխառեմը (բռնկման, գալիցիական, խրուստական) այդ երկրի ժողովրդներին տալիս են այն զիրքը, ինչոր երբեմն ունեին վերը մէջ բերուած մեր օրինակների ժողովուրդները։

Երբորդ՝ Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգների, Զուլիգերիայի և Դերմանիայի օրինակներով մենք տեսանք, որ պետական ֆեդերատիւ ձեւը պատմական երկար պրօցեսուի արդիւնք է, և այդ պրօցեսուի փուլերից մէկն էլ այն է, որ

քաղաքական ինքնուրոյն, աւելի կամ նուազ, կեանք ունեցող բաղկացուցիչ պետութիւնների և մարմինների միջև նախ կայացել է Համադաշնակցութիւն (confédération) և ապա՝ ժամանակի ընթացքում՝ այդտեղից ձեւակերպուել, զարգացել, առաջ է եկել Ֆեդերացիան։ Նախ Կոնֆեդերացիա և ապա Ֆեդերացիա, — այս է տուել մեզ զարգացած երկրների պետական ձեւի օրինակը։

Նախ՝ Հայաստան, Արաբիա, Ալբանիա, Մակեդոնիա, Սիրիա, Քիւրդիստան անկախ կամ կիսանկախ պիտի լինէին, գէթ ուրոյն պետական կազմ պիտի ունենային, որպէսզի դրանց միացնելով Թիւրքիայի միւս մասերի հետ՝ կարելի լինէր բնդհանուր ֆեդերատիւ ձեւ յառաջացնել, ինչպէս որ եղած է այնպիսի մի սահմանադրական երկրում, որպիսին է Դերմանիան։ Կոնֆեդերացիայի տարրերը եղած են կա՞մ միապետութիւններ՝ երբեմն սահմանադրական, կա՞մ փոքրիկ Հասարակապետութիւններ՝ ինքնավարական կազմով։ Երկու դեպքում էլ պետական լրիւ անկախութիւն և կամ կիսանկախութիւն արդէն վայելող քաղաքական մարմիններ։ Սակայն դրանցից և ո՛չ մէկը կայ այժմս երկրի այն տարածութեան մէջ, որ բնդհանուր Թիւրքիա անունն ունի։ Չկայ Հայաստան, Մակեդոնիա, Ալբանիա, Սիրիա, Արաբիա՝ որպէս քաղաքական ինքնագոյութիւն ունեցող մարմիններ։ Ո՛չ միայն, ուրեմն, ֆեդերացիայի պատրաստի տարրեր չկան, այլ նրանից կանխող աստիճանը՝ այսինքն Կոնֆեդերացիայի տարրերը իսկ չկան, իսկ երբ այդ տարրերը չկան, և դեռ չեն ստեղծուել, կեանքի չեն կանչուել, ասել է թէ պետական ֆեդերատիւ ձեւի և նրա առաջ գալու մասին որոշ գաղափար չունենալու յայտարար նշան է այն, երբ ասում է թէ Թիւրքիան դրուի մի ձեւի մէջ, սրի տարրերը դեռ ճնած չեն։

Ռուսներն, Բուլղարներն, Սերբներն, Չեխոսլոուսներն կարող են կազմել մի Կոնֆեդերացիա, տարրերը կան, — ինչիւրն այլ է թէ ինչո՞ւ չի կազմուած — բայց այդ չի կարելի ասել այն ժողովուրդների համար էլ, որոնք այս րոպէիս գտնուած են Թիւրքիայի լծի տակ, որովհետեւ նրանք դեռ Կոնֆեդերատիւ տարրեր չեն կազմել։ Եւ երբ դեռ Կոնֆեդերացիայի տարրեր չկան, ֆեդերացիան, ուրեմն, կմնայ մի լուլիւղիւ, մի պատրանք, իրական հող չունեցող մի ձգտում՝ ներկայ պայմանների մէջ։

Չորրորդ՝ մեր բերած օրինակներից տեսանք, որ ֆեդերացիայի տարրերի գլխաւոր յատկանիշներից մէկն էլ այն է, որ նրանք ունին, աւելուաղն, ներքին միահեծանութիւն։ Թիւրքիայի մէջ եղած տարրերը քանի որ չկան, ասել է թէ նրանց ներքին միահեծանութեան մասին մի խօսք ասելն անգամ աւելորդ է։ Քննութեան առած ձեւերից պարզ կերպով երևաց, որպէս պատմական փաստ, որ դեռ չի եղել ֆեդերատիւ ձեւ ունեցող մի պետութիւն, որ նա առաջ գար ուրեմն նա առաջ գար ուրեմն Այսինքն դեռ չի եղել բաղկացուցիչ կազմ ունեցող մի պետութիւն, որ նրա մէջ նախ հաստատուէր ներկայացուցչական ընտրութիւն, և ապա, շնորհիւ այդ ներկայացուցչական ընտրութիւն, յառաջ բերուած ֆեդերատիւ ձեւ։ Այդպիսի իրողութիւն պատմութիւնը դեռ չի տուել։ Բնդհանուապէս, մենք տեսանք, որ Ֆեդերացիայի տարրերը՝ ինքնագոյութեան իրաւունք ունենալով, իրենց քաղաքական ինքնուրոյն կազմը պահելով, ժամանակի ընթացքում, պատմական զանազան ոյժերի պատճառով, նրանք միասին են եկել և ապա կազմել ընդհանուր ներկայացուցչական ընտրութիւն, նա պատճառ և մտող չի եղել, այլ նա եղել է արդիւնք, պատճառ կան, հաւաքական երկունքի ծնունդ։ Ուրեմն, նախ՝ Հայաստան, Արաբիա, Մակեդոնիա, և այլն, պիտի ունենային գէթ

ներքին միահեծանութիւն, այսինքն ինքնավարութիւն, անկախութիւն կամ կիսանկախութիւն, որպէսզի նրանք՝ որպէս քաղաքական համայնքներ իրարու մօտ գալով՝ կազմէին ընդհանուր ներկայացուցչութիւն: Այլընտուրէն, Ամերիկայի, Գերմանիայի, Չեխոսլովակի ֆեդերատիւ ձեւը յառաջ չի եկել նախ ներկայացուցչական ընտրութիւն հաստատութեամբ այդ երկրներում և ապա ֆեդերացիայի, — ո՛չ, այլ նախ քաղաքական ուրոյն կազմ և կենսւք ունեցող ճարձմաներն են յառաջացել, և ապա դրանք միասին գալով՝ կազմակերպել են ֆեդերացիան:

Արդ, նրանք, որոնք ուզում են Թիւրքիան ֆեդերատիւ ձեւի վերածել, պարզապէս տգիտութեամբ, աճապարել են ձին սալլի յետեւից կապել: Նրանք մտածել են նախ Թիւրքիայի մէջ հաստատել ներկայացուցչական ընտրութիւն, և ապա այդ ընտրութիւնը տուած պայմաններէջ օգտուելով, յառաջացնել ֆեդերացիա — ուս պատմականապէս սխալ թէպէ, վերեւ մէջ բերուած երկրների օրինակը ապացոյց:

Թէ ինչո՞ւ ներկայացուցչական ընտրութիւն չի յառաջանալ ֆեդերացիա, պէտք է քննել խօսքով, առնենք ինչորոշ առարկայ եղող երկրներ:

Թիւրքիան, այս բնակչւ, պետական պարզ ձեւ ունի — և մենք մի փոքր վերեւ տեսնելով թէ ի՞նչ ասել է պարզ ձեւ, — այսինքն մի պետութիւն, որի մէջ արտաքին և ներքին միահեծանութիւնը բաժանուած չէ, նա ունի մէկ աղբիւր, մէկ կեդրոն: Ներկայացուցչական ընտրութիւն, — եթէ հաստատութիւն — Թիւրքիան պիտի լինի խառն մի պետութիւն, առ առաւելն նա պիտի լինի սահմանադրական միապետութիւն. այդտեղ միահեծանութիւնը նորից չպիտի կոտորակուի, նա դարձեալ պիտի պահի իր միութիւնը: Այստեղ պիտի գործի քուէի մեծածառն ու ընտրութիւնը համաձայն այն հիմնական օրէնքն էր՝ որով նա կանչուած է կեանքի: Իսկ Թիւրքիայի մէջ մեծամասնութիւն, այժմ, այդ ասել է խառն նացիօնալիզմ, այսինքն մի ձգտում, ուր պետական կեանքը կազմուի և ձեւակերպուի համաձայն այն պատուիրանների, որոնք չեն հակասում իսլամ օրէնքներին:

Ժողովրդների կերբը, քննախնդրութիւնը, նախապաշարուած աւելի խիստ և յարատեւ է լինում, քան անհատներին:

Տօսել արդարութեան իդէալ չէ, և ոչ էլ միշտ արդար դէպք:

Թիւրք նացիօնալիզմը ինքնապատկանութիւն չի գործադարձում:

Նրանք ուրիշ երկրներում: Բայց մի ինչոր եղել են իր եղբայր:

Պոնալիզմը անդի տուեց Վարի րոպէ ենթադրենք թէ թուրք նա:

Պոնալիզմը անդի տուեց Վարի րոպէ ենթադրենք թէ թուրք նա:

Պոնալիզմը անդի տուեց Վարի րոպէ ենթադրենք թէ թուրք նա:

Պոնալիզմը անդի տուեց Վարի րոպէ ենթադրենք թէ թուրք նա:

Պոնալիզմը անդի տուեց Վարի րոպէ ենթադրենք թէ թուրք նա:

Պոնալիզմը անդի տուեց Վարի րոպէ ենթադրենք թէ թուրք նա:

Պոնալիզմը անդի տուեց Վարի րոպէ ենթադրենք թէ թուրք նա:

Պոնալիզմը անդի տուեց Վարի րոպէ ենթադրենք թէ թուրք նա:

Պոնալիզմը անդի տուեց Վարի րոպէ ենթադրենք թէ թուրք նա:

գումարուելով, կազմուէր լիազօրական, միահեծանապէս մի իսորհուրդ, որ իրաւունք ունենար օրէնսդրել և իր օրէնսդրածը գործադրել անկաշխանող կերպով, — այն փաճանակ, այդպիսի մի ժողովի առաջ եթէ զրուէր ֆեդերատիւ պետական ձեւի տուակերպութիւնները և նա համոզուելով իր քրեէն այդ ուղղութեամբ տար, այն ժամանակ՝ այդտեղից և այդ կերպով՝ կյառաջանար ֆեդերատիւ ձեւ:

Այսպէս են մտածել և այս հիմնական հայեացքի վրան են կանգնել շատ յեղափոխական կազմակերպութիւններ թէ՛ անցեալի և թէ՛ ներկայի մէջ: Այդպիսի մի լիազօրական մարմինի սովորաբար անուանում են Հիմնադիր Ժողով: Այո՛, եթէ մի երկրի մէջ եղած ամբողջ ազգաբնակչութիւն, առանց որ և է կաշկանդուած, իր լիազօրների բերանով խօսէր միահեծանօրէն, առանց հակակշիռ ոյժի, այդտեղից կարելի էր յուսալ, որ այդ ճարձման մի անգամից ապալի հին ձեւերը և մտնի նորի մէջ, ինչոր աւելի համապատասխան է իր շահին: Եթէ մի օր յեղափոխական հիմնադիր Ժողովը ունենային և նա կոչուած լինէր սնորհներու այդ պետութեան սահմանների մէջ եղող մարդկային էակների բախտը, այդտեղից կարելի էր յուսալ մի նոր Թիւրքիա, պետական նորագոյն և աւելի համապատասխան ձեւերով, — ենթադրելով որ այդ ձեւը ֆեդերացիան լինէր:

Եթէ Ռուսաստանում Ռուս Սօցիալիստ Գեղափոխականները ֆեդերատիւ ձեւի կողմնակից են, նրանք միաժամանակ էլ դրել են և՛ Հիմնադիր Ժողով. նրանք չեն մտածում ունենալ ֆեդերացիա ներկայացուցչական հաստատութիւններով կամ խառն պետութեան ձեւի միջոցով:

Բայց, զարմանալի անհետեւողականութեամբ, նոյն այդ թէպէ չեն պաշտպանում Թիւրքիայում նրանք, որոնք Ռուսիայում այդ թէպէ ունին:

Մեզ համար հասկանալի է Հիմնադիր Ժողովի գաղափարին՝ Ներսիսաւրդ Թիւրքերի՝ մահացու հակառակորդ լինելը՝ նրանք պարզապէս իսլամ տարրի դերակշռութիւնը անհրաժեշտ և հրամայական պայման են համարում. բայց այդ չէր կարող լինել դիրքը նրանց, որոնք իրենց սօցիալիստ են համարում, և նոյն խնդրի համար Ռուսիայում Հիմնադիր Ժողով են ուզում, իսկ Թիւրքիայում ներկայացուցչական ընտրութիւն: Սօցիալիզմը կոչում չունի պետական բուրժուազական ձեւեր հաստատել, նա այդ բոլոր ձեւերի դէմ է. նրա գերակշռող և էական տաքսիօնն պիտի լինի Հիմնադիր Ժողով՝ բուրժուականութիւնների կործանման պարագային՝ որովհետեւ միայն նա է, որ կարող է պատմական երկունքները՝ կրճատել:

Արդ, մտածք հասկանալի կլինէր թէպէ նրանց, որոնք հան ուզում են ֆեդերատիւ ձեւի վերածել, եթէ Թիւրք:

Թիւրք, միաժամանակ և՛ Հիմնադիր Ժողով: Բայց նրանք դիմել:

Եւ, դիմում են ներկայացուցչական ընտրութիւն, երբ փոխանակ դիմում են կապում և իրենց նպատակին դրանով ձին սալլի յետեւ:

Նրանք հետեւում, ի հարկէ տրամադորէն հակառակ ընդհանրապէս: Վերակրկնելով այն՝ որ ներկայացուցչական ընտրութիւն ֆեդերատիւ ձեւ չի յառաջացրել, շատ ունենալ են:

Եւ, այն, որ Հիմնադիր Ժողովը էլ անպատշաճ չի յառաջացնել պետական այդ ձեւը, որովհետեւ չի կարող լինել ձեւը անպատշաճ ձեւը:

Տօսել արդարութեան իդէալ չէ, և ոչ էլ միշտ արդար դէպք:

Պոնալիզմը անդի տուեց Վարի րոպէ ենթադրենք թէ թուրք նա:

Պոնալիզմը անդի տուեց Վարի րոպէ ենթադրենք թէ թուրք նա:

Ժողովը պետական այդ ձևին հակառակեց ֆրանսիացու : Եթէ Ամերիկեան դադարները կազմած Հիմնադիր Ժողովը յաջողեցաւ՝ դրա մի ճեղք պատճառը պիտի վերագրել նախնական տարրերի լինելուն :

Սրանով ուղում ենք ասել, որ թէև Հիմնադիր Ժողովը անպատճառ չի ուզել ֆեդերացիա առաջ բերել, բայց զէթ նա ուզել էր, տարախառն մի բնութայն, որ հասկանալի կլինէր, որպէս իրենք իրենց ծրագրին և նպատակին հետեւողականներ, եթէ այդ միջոցը ընդունուէր ֆեդերատիւ ձևին հասնելու :

Երբ ֆեդերատիւ թիւրքիս ստեղծելու նախնական անհրաժեշտ պայմաններ չկան, երբ նոյն խիղճալի այդ նպատակին դիմելը, ցանկացողների կողմից, կատարուած է բոլորովին սխալ և հակառակ ուղղութեամբ, այն ժամանակ ինչո՞ւ չընդունել այն ուղին, որ արդէն թիւրքիոյ իրականութեան բաժինն է դարձել և իրերը դէպի այդ կողմն են հոսանք առել որոշ կերպով : Ինչո՞ւ չընդունել այն միջոցը, որ կարող է հիմունքներ ստեղծել ապագայ այնպիսի հաստատութիւնների, սրանք զարգանալով և կատարելագործւելով՝ կարող են տալ այն արդիւնքը, ինչ որ ժամանակակից ընկերութիւնը կցանկանայ : Ձի կարելի պետական ձևեր և հաստատութիւններ ստեղծել ըստ հաճոյս, դրա համար հարկաւոր են տարրեր, կանխապայմաններ, խիղճեղած պայմաններից տարբեր հաստատութիւններ չի կարելի յառաջ բերել, քան այն, ինչոր իրերը իրենք թելադրուած են և երկրի մէջ գոյութիւն ունեցող յարատեւ իրողութիւնները (les faits permanents) անհրաժեշտ դարձնում : Պարզեցրէ խնդիրը :

Մի կողմ թողնելով եւրոպական վեց ճեղք պետութեանց դէպի թիւրքիան ունեցած յարաբերութիւնը և գրանից յառաջացած արդիւնքը, աչքի առաջ առնենք այն միւս երկու հոսանքները, որոնց մասին այս յօդուածի սկզբում խօսք է եղել, — դա է սեպարատիզմը (անջատականութիւնը) և ինքնավարութիւնը :

Այդ երկու հոսանքները միայն անցեալում դործող ոյժերի հետեւանք չեն, նրանք ո՛չ պատահական և ո՛չ էլ միջամեկտայ են. նրանք տնցեալի մէջ էլ ունեցել են իրենց կենսականութիւնը, ունին և՛ այժմ, և կունենան քանի որ այդ երկու երեւոյթները ծնող պատճառները յարատեւօրէն կան, այսինքն ներկայ թիւրքիոյ միաշուն իրողութիւնն են կաղծում :

Անշարատիզմը (անջատականութիւնը) սկզբունք չէ, նա արդիւնք, հետեւանք, միջոց է սօցիալիստի համար, եթէ իրականութիւնը դա անհրաժեշտ է դարձնում :

Ազգայնականի (nationaliste) համար անշարատիզմը անվերածելի մի սկզբունք է, նա ուղում է յամենայն դէպս, ubi et orbi, բաժանուիլ, որովհետեւ անջատ պատանէշների մէջ առնուած ազգայնութեան գոյութիւնը նրա համար յաւիտենական սկզբունք է : Որովհետեւ մէկ ազգ միւսից տարբեր է, ուրեմն նա պիտի անջատուի և կազմի մի առանձին պետութիւն, իր ազգայնական սահմանների մէջ : Ուրեմն որքան ազգայնութիւն, այնքան էլ պետութիւն, արեւ է թէ պետական տերրիտորիաները պիտի կաղծուէին ըստ ազգայնութեան : Սա է եղել ազգայնականների թէզը և նրանք այս տեսակէտով են նայում անջատականութեան վրայ, որպէս քաղաքական մի երեւոյթի : Մենք պիտի անջատուենք թուրքերից, որովհետեւ նրանք թուրք են, օտար են, խիղճեք՝ Հայ : Որովհետեւ Հայ և թուրք տարբեր ցեղեր են, ուրեմն տարբեր պետական սահմաններ էլ, — սա է ազգայնականի քաղաքական փիլիսոփայութիւնը :

Սեղ համար խնդիրը այդ երեսը և այդ բացատրութիւնը չէ ունեցած : Սօցիալիստի համար անջատականութիւնը իրերի անհրաժեշտ դարձում արդիւնք է, — այսինքն, երբ նա համար ներկայանում են քաղաքական և անտեսական որոշ

պայմաններ ու տեսնում է թէ իր նպատակին՝ սօցիալիստական ծրագրի իրագործմանը կարող է հասնել մի միայն անջատականութեամբ, որովհետեւ պատմական պայմանները այդ հրամայական և հասունացած են դարձրել, ուստի ինքը հարկաւորում է միայն ընդունել այն, ինչոր մի տեսակ fait accompli է արդէն եղել՝ պատմական գործօն ոյժերի շնորհիւ :

Թուեցէ աւելի որոշ փաստերով : Թիւրքիայի մէջ տիրապետում է բացարձակ բռնապետութիւնը, նրա մէջ ապրող ժողովուրդները զարգացման տարբեր աստիճաններ ունեն, նրանց քաղաքական և անտեսական պահանջները իրարու չեն զուգորդում, օրինակ, — Զէյթէլը և Հայը իրար հետ չէ կարելի կապել, պատմութիւնը այդտեղ իր խօսքը ասել է, կապելու հետեւանքը կլինի մին աւելի յառաջադէմը, մեր օրինակում Հայը, միւսին գոհել, ինչոր անում է արդէն բռնապետութիւնը, — և ահա՛ երկու հակադիր իրերի անվերածելիութեան առաջ, սօցիալիստը հարկաւորում է ընդունել անջատականութիւնը, որպէս միջոց : Եթէ թիւրքիայի մէջ տիրէր մի այլ բէթիմ, քան բացարձակ բռնապետութիւնը, և այդտեղ ապրող ժողովուրդները իրենց պահանջներին համաձայն հաստատութիւններ ունենային, բնական է որ սօցիալիստի համար անջատականութեան խօսք չէր կարող լինել : Խօսք կունենար ասելիք միայն ազգայնականը (nationaliste) : Ուրեմն մի սօցիալիստ, երբ անջատականութեան խօսք է անում, պէտք է նրա հակացողութիւնը այդ մասին տարբերել ազգայնականի հակացողութիւնից : — Թիւրքիայի մէջ կայ անջատականութիւն, որովհետեւ կայ բացարձակ բռնապետութիւն, սուլթանականութիւն, խալիֆայութիւն և բազմապետութիւն : Թուրքերը պահանջներ ունեցող ժողովուրդները առնուած են միեւնոյն ծածկի տակ, մէկի համար այդ ծածկը անտանելի է դարձել, խիղճ միւսի համար՝ ոչ : Մարքսը ինքը անջատականութեան թէզը պաշտպանել է Լեհացիների նրկատմամբ :

Բայց երբեք էլ թող չկարծուի թէ անջատականութիւն կարող է առաջ բերել միայն բացարձակ բռնապետութիւնը, այսինքն անջատականութիւն չի լինիլ, եթէ վաղը թիւրքիայի մէջ հաստատուի, ենթադրենք, ներկայացուցչական բէթիմը չի ճանաչիլ բոլոր անհատների համար քաղաքացիական հաւասար իրաւունքներ և պարտականութիւններ, եթէ ներկայացուցչութիւնը իրերի խիղճական արդիւնքը չի լինիլ, եթէ այդ ներկայացուցչութիւնը իր հիմունքները կրնի անհանդուրժելի սահմանափակումների վրայ և չի ճանաչիլ բազմապետութիւն ժողովուրդների կարեքներին համապատասխան ինքնավարական հաստատութիւններ և ամէն ինչ կաշխատի դնել արուեստական սահմաններին ստեղծած ճեղքմանութեան քուէի վրան — այն ժամանակ դրանով անշարատիզմի առաջը չի առնուիլ, նա դարձեալ կշարունակի գոյութիւն ունենալ : Մի թէ ներկայացուցչական բէթիմ ունեցող պետութիւններ չկան այժմ, ուր անջատականութիւնը չշարունակի գոյութիւն ունենալ :

Ինքնավարութեան վրայ այժմ չենք ուղում կանդ առնել, որովհետեւ այդ մասին երկարօրէն խօսել ենք "Հընչակ" -ի No. 5, 1907-ի մէջ :

Ե դ ր ա կ ա ց ու թ իւ ն . —

Թիւրքիան, որպէս պետական օրգանիզմ, դիմում է դէպի անաւարտ ընդլայնում (désintégration), այդպէս է ցոյց տալիս նրա պատմութիւնը, այդ եղրակացութեանն են բերում մի շարք միայն բնաւորութիւն ունեցող իրողութիւններ, իրողութիւններ՝ որոնք թուրք պետական կեանքի անբաժան մասն են կաղծում : Անամբողջացման այդ երեւոյթի

գլխավոր պատճառը և աղբյուրն է բացարձակ բռնապետութիւնը՝ սուլթանականութիւնը և խալիֆայութիւնը ու բազմապետութիւնը՝ յառաջադէմ ժողովրդների զարթոնքը, նրանց՝ իրենց կարիքներին և տնտեսական ու քաղաքական պահանջներին անհամապատասխան հաստատութիւնների մէջ գրուելը:

Իրերի այդ դրութեան մէջ պաշտօնական «Երեսօտարը Թիւրքիա»-ն դնում է Միդհատի Սահմանադրութիւնը, որպէս միջոց անամբողջացման առաջնաւոր և Օսմանեան պետութեան գոյութիւնը շարունակել տալու: Թէ այդ սահմանադրութիւնը մի աստիճան անբաւարար է ըզրացուած նպատակին հասնելու — այդ նկատմամբ մենք երկարորէն խօսել ենք ուրիշ անգամ:

Այժմ, «Երեսօտարը Թիւրքիա»-ն և Հայերից մէկ մասնաժողովը կան, որոնք Թիւրքիայի արժանապատիւ վերափոխութիւնը ուզում են տեսնել Ֆէդէրալիստի մէջ: Այդ մասին, մեր եզրակացութիւնն է, այժմ խօսք չի կարող լինել, որովհետեւ Թիւրքիայում պետական այդպիսի ձեւ յառաջացնելու ամենամեծ զրգարանն առաջ է եկել, որն անհրաժեշտ է նախապայմանները լինելուց յետոյ, դա պիտի լինէր Հիմնադիր ժողովով և ո՛չ թէ ներկայացուցչական րէսթիմի միջոցով, որովհետեւ յառաջադէմ դեռ և՛ ո՛չ մէկ ազգի պատմութիւն ցոյց է տալիս, որ ներկայացուցչական րէսթիմ հաստատուելուց յետոյ՝ կարող է տեղի ունենալ պետական փէդերատիւ ձեւ:

Անշատականութիւն և հակասոցիալիզմ դրանք իրարու հոմանիշ հասկացողութիւններ չեն: Եթէ սոցիալիստը անշատականութեան է ձգտում, — դա նրա համար մի միջոց է սոցիալիստական իր ծրագրի իրագործմանը՝ որովհետեւ Թուրք Բռնապետութիւնը, իր ներկայ պայմաններով, անշատականութիւնը դարձրել է անհրաժեշտութիւն՝ բազմապետութիւնը յառաջադէմ ժողովրդների համար:

Եթէ սոցիալիստը տիրող Բռնապետութիւնից բաժանուել, անշատուել է ուզում, նա մատնանիշում է Թիւրքիայի իրականութիւնը. բաց թող չկարծուի թէ Թիւրքիայի մէջ անշատականութիւն չի լինիլ, եթէ վաղը հաստատուի, ենթադրենք, ներկայացուցչական րէսթիմ: Եթէ այդ ներկայացուցչական րէսթիմը չի ճանաչիլ բոլոր անհասանելի համար քաղաքացիական հաւասար իրաւունքներ և ստատականութիւններ, եթէ ներկայացուցչութիւնը իրերի իսկական արդիւնքը չի չինիլ, եթէ այդ ներկայացուցչութիւնը իր հիմունքները կրնի անհանգուստ և սահմանափակումների վրայ և չի ճանաչիլ բազմապետութիւնը ժողովրդների կարիքներին համապատասխան ինքնավարութեան և անհատականութիւնների և ամէն ինչ կաշիւատի դնել արուեստական և անօրէն ստեղծած մեծամասնութեան քուէի վրան — այն ժամանակ դրանով սէպարատիզմի առաջը չի աւելիլ, նա դարձեալ կշարունակի գոյութիւն ունենալ:

Այդ, երբ իրերի այս ընդհանուր կացութեան մէջ մեկ տեսում է՝ որպէս քաղաքական կուսակցութիւն՝ գալ համագործակցել եւ համերաշխել Թուրքական Բռնապետութիւնը կործանելու ընդհանուր տեղիատրիայից. մենք՝ որ միայն Հայկական Դատ և Հայաստան ունինք և սոցիալիզմի իրականացումը այդ երկրի մէջ մեր հակամարտութեան ղեկավարիչ և տիրապետող սկզբունքն է կազմում, մենք ասում ենք՝ որ պատրաստ ենք համագործակցութեան եւ համերաշխութեան ձեռք կարկառելու, պայմանով որ ընդհանուր կուսի նպատակը լինի տապալուող բռնապետութեան փոխարէն հաստատել Ռաճկալարական Սահմանադրութիւնը ամբողջ երկրի համար և Ինքնավարութիւն՝ բազմապետութիւնը ժողովրդների, ուրեմն և Հայերի ու Հայաստանի համար:

Ինքնավարութիւն ամբողջ երկրի համար և Ինքնավարութիւն՝ բազմապետութիւնը ժողովրդների, ուրեմն և Հայերի ու Հայաստանի համար:

Լեհ սոցիալիստը, Ռաճկալարական Սահմանադրութեան հետ, դրել է և՛ Լեհաստանի ինքնավարութիւնը, նոյնը արել է և՛ Իրլանդական Սոցիալիստ կուսակցութիւնը, նոյնը արել են և՛ Աւստրիայի մէջ եղող Սոցիալիստական կուսակցութիւնները, ինչպէս որ նոյն այդ փափագը ունի Բուլղար Սոցիալիստը՝ Մակեդոնիայի համար: Եւ դա պահանջ է բոլոր երկրների սոցիալիստների՝ այն երկրների համար, ուր բազմապետութիւնը ազգութիւններ են կողք կողքի ապրում: Սոցիալիստ չէ՝ և չէ՝ կարող լինիլ նա, ով որ ազգերի ինքնորոշման, ինքնավարութեան, սկզբունքներն կողմնակից չէ — այսպէս են մտածել, այսպէս են մտածում բոլոր նրանք, որոնք սոցիալիզմի Ռաճկալարներն են հանդիսացել, և են:

Եթէ Սոցիալիստական աշխարհը պետութեանց ֆէդերատիւ ձեւի խօսք է անում, ասենք և՛ այդ, — դա արդէն կազմուած պետութիւնների համար է, ուր ազգութիւն և պետութիւն հոմանիշ են և իրարու զուգորդում: Դերմանիան, Պրանիան, Աւստրիան, Անգլիան . . . կապել իրարու հետ, յառաջացնել նոր տեսակի և նոր հասկացողութեան Կոնֆէդերացիա (համագաղափարութիւն, (Confédération), և այդպիսով, աստիճանաբար, առաջ բերել հասարակապետութիւնների հասարակապետութիւն, ուրեմն և իրարու հետ քաղաքականապէս ու տնտեսապէս կապուած ամբողջ մարդկութիւն: Իսկ եղած պետութիւնների ծոցի մէջ, նրա բազմապետութիւնը մարդկային ազգութիւնների համար, տաւնց բացառութեան, պահանջել և իրագործել ինքնավարութիւնը, — սա է թէզը բոլոր սոցիալիստների, թէզն է և՛ մեր:

Դեժոկրատական (Ռաճկալարական) սահմանադրութիւն է պէտք նախ, որ հասարակական իշխանութիւնը լայն դռներ բաց ունենայ ամէն գործունէութեան համար և իր իշխանութիւնը ամէն բանի ստանայ ընկերային մարմնի բոլոր ծայրերից: Դեժոկրատական Սահմանադրութիւնը՝ իր իրաւունքներին և պարտականութիւններին զիտակից ամէն լուսամտ քաղաքացու՝ գործունէութեան անմիջական միջոց է տալիս, և իրականացնում է ժողովրդական քաղաքական միահեծանութիւնը, ու ազատ ասարկել տալիս գործաւոր դասակարգին դարգանալու, յառաջադիմելու և իր սոցիալիստական ծրագրի իրագործմանը հասնելու:

Տեղական կեանքի, բազմապետութիւնը ժողովրդների ինքնագոյութիւնը պաշտպանելու և իր զարգացումը յառաջ տանելու համար՝ ինքնավարութիւնը անպայման անհրաժեշտութիւն է. առանց ինքնավարութեան՝ տեղական կեանքը կարող է մեռնիլ, աւելի ուրիշ կլինէր ասել, որ կապանանութիւն. ու դրա համար բոլոր սոցիալիստները ինքնավարութեան պաշտպան են, և չեն ուզում որ զանազան բազմապետութիւն տարբեր ունեցող պետութիւնների ժողովրդների կացութեան մէջ անդամատութիւն լինի:

Ուրեմն Թիւրքիայի ամբողջութեան հետ գործ ունենալ յանկացողը, ուրիշ դիրք չի կարող բռնել, որպէս սոցիալիստ, եթէ ո՛չ զինել ՌԱՄԿԱՎԱՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ բոլոր երկրների համար և Ինքնավարութիւն՝ բազմապետութիւնը ժողովրդների պատմական հաստատուն գոյութիւնը ունեցող ժողովրդների համար: Դրանցից մէկը չի կարող լինել՝ առանց միւսի, մէկը միւսի գոյութիւնը և յարատեւութիւնը ապահովողն է:

Ինքնավարութիւնը կլինի, Թիւրքիայի բազմապետութիւնը ժողովրդների համար, նախնական մի սողմ, որ աստիճանաբար կսկսի զարգանալ և ընկերական, պետական նոր ձեւերի համար յարմար հող պատրաստել: Ինքնավար երկրները աս-

տիճանաբար առաջ երթալով, եթէ պայճանները այդ անհրաժեշտ կհամարեն, ձեռք կբերեն նոր ոտորագելիներ (attributs), և մի օր նրանցից կկազմուին կա՛մ փեղեբատու տարրեր, ուրեմն Թիւրքիան փեղեբացիայի կը վերածուի, կամ նրանք կանջատուին և դառնան, ուրոյն պետութիւններ կը կազմեն, կամ երթալով աւելի կթուրանան ու իրենց ունեցած ստորոգելներէն շատերը կկորցնեն և այդպիսով առաջ կգայ միաւորականութիւն, (unitarianisme) :— Թէ որանցից ո՛րը կլինի, դա ապագայի գործ է և կախումն կունենայ պատմութեան հանդէս դրած ոյժերից և ինքնավար երկրների ժողովրդների կենսականութիւնից:

Ու այս նկատումների հետ միասին չմոռանանք, որ Թիւրքիան, որպէս պետութիւն, ինքնավարական երկրներ ունի այս րոպէիս իր ծոցի մէջ և իր պետական կեանքի երեւոյթներից էլ մէկն է կազմուծ:

Քաղաքական մի կուսակցութիւն, որպէս գերազանցօրէն պատասխանատու մի կազմակերպութիւն, հնարաւոր ամէն միջոցներ ձեռք պիտի առնի ռաջթաքումներից ըստ կարելոյն հեռու մնալու: Անհատական սխալը այնքան աղէտաբեր չի լինիլ մի հասարակութեան համար, որքան ընդհանուր կուսակցականը:

Համագործակցութիւնը, համերաշխութիւնը պիտի դրուի այնպիսի պայճանների և ուղղութեան վրայ, որ բոլորի պատմութիւնից, ժողովրդների կեանքից, այլապէս մին կարող է տուժել յօգուտ միւսի. իսկ պատմութեան մէջ մի անգամ տուժողը դժուար թէ իր կորցրածը վարող լինի յետ առնել, նամանաւոր մեր օրերում և Թիւրքիայի մէջ:

Եւ եթէ, նորից կրկնում ենք, համագործակցութիւնը, համերաշխութիւնը չպիտի տրուի ժողովրդների արդարացի և անյետաձգելի պահանջների վրան, — այն ժամանակ ամէն ժողովրդի մէջ գործող քաղաքական կուսակցութիւն, բնական է, որ կերթայ այն ուղիով և այն ճանապարհներով, որոնցով որ յարմար կդատուի այն Դատի լուծումը, որի անունով որ ինքը երեւան է եկել և գոյութեան իրաւունք ստացել:

Ս. ՍԱՊԷԱՆ-ԳԻՒԼԵԱՆ

## Թ Ղ Թ Ա Կ Յ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

### Ն Ա Մ Ա Կ Վ Ա Ն Ի Ց

Այն օրէն ի վեր երբ դաշնակցական դաւաճանը իր տխրահռչակ գործը կատարեց, Վանը անապահովութեան, հրոյ և սրոյ երթարկուած է: Երեք դար երեցող երեք երկար ամիսներ անցան, և կեանքը իր նօրմալ վիճակը վերստանալու երեւոյթը չունի: Յաճող մատնիչի զոլուելի կեանքին վերջ տրուեցաւ մի ամիս առաջ: Մարտ 10-ին երեկոյեան ժամ 10-ին վրէժմանդիւր ձեռքը բարձրացաւ դաւաճանի գլխին, այն ատեն երբ նա իր հաւատարմութիւնապահ-ոստիկաններով շրջապատուած թիւրքերի կեդրոնի մէջ կը ճեմէր: Տեղօրիստը չնայած իր հասակին և անփորձութեան, (18-20 ամեայ մի պատանի), ատորճանակի մի հարուածով գետին փռեց վատը և աննման հերոսութեամբ փախաւ ապշած ոստիկանների միջէն: Դաւաճանի մահը անմիջական չեղաւ. նա դեռ երկու օր էլ

ապրեցաւ, որպէսզի գուցէ ցաւի տպաւորութեան տակ շատ մը անմեղների զխին իր վերջի մաղձն էլ թափէր... Բայց վերջապէս մեռաւ նա այնպէս՝ ինչպէս որ կը մեռնին մարդկանց կողմէ անարգուած բազմաթիւ եղեռնադորձներ: Եւ մեռաւ նա՝ ջնջելով իր հետ Վանի Յեղ. կենսունակ ոյժերի մեծ մասը: 1908-ի Մարտ 10-ը ըստ ամենայնի համապատասխան է 1896-ի յունիս 3-ին: Մարտ 10-էն սկսեալ նորա-նոր վիշտերու տարափին տակ կը ճգմուինք: Անըստուկութեան երկրորդ սարսափեցուցիչ շրջանը այն օրէն կսկսի, և ներկայիս մէջ մեռեալը իր մահով աւելի երջանիկ է՝ քան մենք մեր կեանքովը: Օրեր կանցնին մերթ լուրհարաւոր և մերթ տխուր. երբեք սակայն ժպտի գործը չեն կրեր նօքա: Ամէն րոպէին կատորածի և ակներև սովի ուրուականներն են մեր առջև ցցուողներ: Մարտ 10-ի ոճիրների հետքը մասամբ ջնջուելու համար պէտք են մեզ տան տարիներ ալ: Դեռ չորցած չեն փողոցների մէջ լճացած արիւնները, գետերն ու լիճը իրենց ծոցերէն մորթոտուած դիակներ կը հանեն: Ո՞վ կրնար երևակայել թէ այն օր մինչ Յեղափոխութիւն իր արդար վրէժը կը լուծէր. թուրք գաղանացած ամբոխն ալ կանխամտածութեամբ պատրաստուած էր իր գաղբելի և տրիւնարբու բնազդներին դահապարհ տալ: Ժամ 10-ին կիյնար դաւաճանը, մինչ ժամը 9-ին քաղաքի ճամբաների վրայ բազմաթիւ անմեղներ ալ կին, և աղայ արդէն իրենց շունչ կիչէին վայրենի ամբոխի լախտերի հարուածներէ, գնդակների տարափի, քարէ կարկտի տակ: Եւ երևակայե՛լ որ շատ երն ալ սղոցուած էին, մինչ բաղմաթիւներ ալ թիւրքերու աներու մէջ թուրք կատաղի կանանց դանակներ ի տակ անդամաճաւատելով և կտրտուելով կը մեռնէին անխառնակ մահով՝ անօղնական և հեռի ճեղական գրկերէ և ընտանեկան գուրգուրանքներէ...: Ու այսպէս ժամը 9-էն մինչև յաջորդ օրը երեկոն ինկան 100-է աւելի յայտնի անձեր, իսկ գիւղացիներէն ո՛րքան սպանուածներ կան,—այդ կը յայտնուի ապահովութիւն հաստատուած ատեն, երբ յարաբերութիւններ կսկսեն քաղաքի և գիւղերի միջև: Այս յայտնի եղեռնագործութեանց ատեն աչքի կը զարնուէր մասնաւորապէս կուսակալի թուլութիւնն և համա-մտութիւնն: Սպանութեանց ատեն քանինք կապաստանին Կուսակալի տուն, բայց կոպտաբար կը մերժուին: Տեղուց վերաքննիչ ատենի նախագահ, մի յայտնի անբարոյական և հաշտեաց մարդ՝ թուրք խուժանին պարագլուխ հանդիսանալով հանդերձ՝ կուսակալը լռեց, ոստիկանապետը հայ մը մօրթած ատեն կուսակալէն կը կանչուի, բայց կը պատասխանէ՝ «սէվկիլի Դուռի-թին էֆքեարինի ալմաքտայ իմ»... Եւ Կուսակալը լռեց, ամսէ մը վեր է ինչ շուկան զոյ, երթեկեկութիւնը դադարած, և քաղաքը կենդանի մեռելութեան դատապարտուած է, եւ Կուսակալը կը լռէ: Հակառակ տեղուց Անգլ. Ռուս. եւ Ֆրանսական հիւպատոսների

պահանջներին (Կուսակալի եւ վերաբնիչ ատենի նախագահի պաշտօնանկութիւններ, երկրի խաղաղութիւն, եւ զինուորական հրամանատարին պատուանշան, որովհետեւ խոստովանելի անձնութեամբ մը մեծ դեր խաղաց նա ի նպաստ հայոց—) Կուսակալը կը շարունակէ իր պաշտօնը: Եւ դեռ Յ վաշտ զօրք ճամբայ հանել տուած է. որպէսզի անոնց օգնութեամբ ընդհանուր խուզարկութիւն ընէ, Յեղափոխականներ ձերբակալէ եւ հայ ու թուրք կրկին եղբայրացնէ (°): Ժողովքներու հեշտօրօք երազ, որ կը պատմուի արիւնքամ հայերուն. եւ նոքա կլսեն՝ արցունք աչքերին եւ մահատիւ դարուը ճակատին: Կը համբերենք մենք սպանդանոցի մէջ մորթուելու պատրաստուող ոչխարի մը նման: Առաւել քան երբ և իցէ այժմ համոզուած ենք որ միացնակ թողուած ենք դահճի բազուկին տակ: Հիւսիսայինները չտեսնուած ոգևորութիւն ցոյց տուին, զիմացան, բողոքեցին, հեռագրեցին. և յետոյ... լռեցին, որովհետեւ այդպէս թելադրուեցաւ իրենց՝ դեպքաններէն: Տեղուց Թէրիզը նոյնպէս շարժուեցաւ և բողոքեց՝ բայց այժմ լռած է, թերեւս բարձրագոյն հրամանաւ: Կապառնան ու կը դարենն միայն կուսակալն ու խուժանը, անտարակոյս մեծ մարդասպանի խորհրդով և հրամանով: Ահա գարուն է, վար-ցանքի ժամանակ, բայց ո՛չ զիւղացին, ո՛չ քաղաքացին իրար հետ յարաբերելու զիւրութիւն չունին, ամէն ոք իր տան մէջ փակուած կը կենայ: Տնտեսական տագնապը սոսկալի է: Հայ չկայ, վար-ցանք աշնանէ շատ քիչ եղած է, և այն ալ՝ որչափ կըսեն՝ փճացած մեծաւ մասամբ: Գարնան առթիւ գիւղացին հացահատիկ մը անգամ ցանած չէ, խեղճը չունի որ ցանէ: Իսկ պատերազմի լուրերն արդէն զամէնքը տարապետար ըրած են: ԳԵ-էն վերջ զոնէ միլիթարութիւն մը ունէինք, կրնայինք գաղթել, հիմա ճամբայ ալ չկայ, զոնէն դուրս ելնելուն՝ պէս կապանուինք: Ո՞վ պիտի լինի մեր տէրը և փրկիչը...

ՎԱԼԱՆԾ

7 Ապրիլ 1908 (հ. տ.)

ՎԵՆ

### ՆԱՄԱԿ ԲԻԹԼԻՍԻՑ

Հոս գոյութիւն ունեցող կացութիւնը աննկարագրելի է: Բանի մը տարւան ընթացքին մէջ, կանխամտածուած ծրարողի մը համաձայն՝ պարբերական դրութեամբ կրկնուող հարձակումներն ու խոստովանելի զբախտ ժողովուրդը անհունապէս սպաւեր, քայքայեր ու հասցուցեր են գերեզմանին եզրը:

Զրկուած ըլլալով ինքնապաշտպանութեան տարրական միջոցներէն, չունենալով ուէ միլիթարիչ անկալութիւն մը, անիկայ՝ իբրեւ անզօր հանդիսատես՝ անկարող է զիմադրուել անորակելի բռնութիւններուն:

Ամէն օր ակնատես ըլլալով մարդկութեան այդ լքուած ու թշուառ զանգուածի բազմապատկեր մարտիրոսութեանը,

բարոյական ու նիւթական մեծ ուժերու սահմանին մէջ ճիւղեր կընենք՝ գէթ մասնակի դարձանք ստեղծելու ու չափով մը զոնէ ճեղմացնելու անոր դպացած ցաւին սաստկութիւնը: Սակայն, այդ ամենը ճիշտ մէկ կաթիլ սփոփանք է խոր թշուառութեան մէջ ընկղմուած ժողովրդի համար: Գործնաւոր ահալելի եղեւնագործութիւններն ու քսամեղի՝ արհաւիրքները անթիւ, անհամար են, այնպէս որ մեր սիրտը կը ճմրուի, երբ մենք հնարաւորութիւն չենք ունենար օգնութեան ձեռք կարկառելու մահամերձ զբախտին կամ վշտահար արկածեալին, զո՛հ՝ մարդկային անուր բարբառութեան:

Ճիշտ մէկ քանի օր առաջ քաղաքին մէջ ցուրտէն և անօթութեանէն մահեր պատահեցին: Անկից կէս ժամ հեռու Փաբշէն հայաբնակ գիւղը գրեթէ բոլորովին ամաչացաւ: 4 օր առաջ բնակիչները՝ կին, մարդ, տղայ, հոս թափեցան՝ քաղցածութենէ մաշուած ու հարածուած վիճակի մէջ: Անոնց թողուցած ապաւորութիւնը սրտաճմլիկ ու սրբերգական էր: Կրամներ և ծանկները կիթառած մէկ քանի հարկը գիւղացիներ էին անոնք, որ աղիւղորմ վայնասուններով տեղույս առաջնորդարանէն նիւթական նպաստ կը խնդրէին՝ օտար տեղեր գաղթելու համար: Բանի մը բարեբար անձնաւորութիւններ օգնութեան հասնելով՝ հազիւ հազ կըցան ճանապարհածախս մը հայթայթել ու Տիգրանակերտ զրկել, ուր անոնք ցերեցան ըլլալով՝ պիտի մուրան և կերպով մը քաշքշեն տանջանքներով ու զրկանքներով լի իրենց կեանքը:

Անպարտ տառապանքներէն ու անգուժ սովի խեղդող ճանկերէն ճողպարելու դիտաւորութեամբ՝ գաղթելու պատրաստութիւններ կը տեսնէին նաեւ շրջակայ գիւղերը: Բորձաւար կրնանք ըսել որ ո՛չ մի գաւառ Բիթլիսի չփոխ հարստահարուած ու կեղեքուած չէ: Այլևս ապրելու կարելիութիւն չկայ և խեղճ բնակչութիւնը գաղթի ստիպողական հանգամանքներու մէջ գտնուելով՝ այդպիսով կը քէ հայրենիքի իր արիւն քրտինքով ցողուած սրբական վայրերը:

Մի նուիրական պարտք կը ծանրանայ արատահամի առէն ինքնագիտակից հայի ուսերուն, խօսելու, ներկայացնելու իրաց վիճակը և կոչեր կարգալու ի նպաստ երկրի արիւնքամ սովեալներուն, որոնք կըձգեն իրենց բնակավայրը և պանդխտութեան ցուպը առնելով՝ դէպի օտարութեան կը դիմեն: Թող առէն ոք չը վրանայ ջանքեր՝ գործ գնելու և առէնուրեք բարձրաձայն հիշեցնելու ահապանող ծառայուտ անդամներին օրհասին: Թող առէնքն ալ իրենց սեպհական պարտականութիւնը նկատեն բազմաբարձր ժողովրդի Դառին ծառայելը և ներկայացած պատեհ առիթներին յորդորեն իրենց շրջապատողներուն շուտափոյթ աջակցութիւն ցոյց տալ և աշխատել հարթելու փրկութեան ճամբան:

7—20 մարտ, 1908

ՃԱՄԲՈՐԴ

ԲԻԹԼԻՍ

### ԿՈՏՈՐԱԾԸ ՎԱՆՈՒՄ

Դաշնակցականները բանի մը անգամ փորձեր ըրին իրենց հարադատ ծնունդ հրէշ Դաւիթը սպաննելու, բայց անյաջող: Մարտ 10-ին՝ երբ գաւառանը այգետանէն քաղաք կերթար երկու զինուորներու հսկողութեամբ, ճանապարհին պատահեցաւ իր նախկին ընկերներէն մի երիտասարդի, որուն նախատական խօսքեր ուղղեց շէֆերու հացեցին: Տղան յանկարծ ատրճանակը հանելով՝ ծանր վիրաւորեց դաւաճանին և խառնաշփոթ դրութիւնէն օգտուելով՝ յաջողեցաւ փախչել-ազատուել: Դաւաճանը երկու օր յետոյ սասկեցաւ:

Դեպքի պահանջները խուժանը, արդեն նախապատրաստված, յարձակուեցաւ ճանապարհին գտնուող հայերու վրայ և պաղ զէնքերով անխնայ կոտորեց հանդիպողին: Առաջին առթիւ այդ եղեռնական ոճրագործութեան զոհ գացին 85 հայեր, իննը հոգի ալ վիրաւորուած: Շուկան անմիջապէս դոցուեցաւ: 2000 հոգի աղետաւորեցին հայեր ապստամբեցին քաղաքամիջի հայ տունները: Հիւսկապետները անմիջապէս գործի անցան, որոնց պահանջմամբ ֆէրիզ փաշան դօրքերով շրջապատեց թուրք թաղերը և խաղաղութիւնը իբր թէ վերականգնեց:

Յաջորդ օրը հիւսկապետները քաղաքամէջ մնացած այդ 2000 հայերը դօրքերու հսկողութեամբ աղահալիկութեամբ անկեցան:

Մարտ 10-էն մինչև ապրիլ 10 ամբողջ շուկան փակ մնաց: Անկից յետոյ շատ քիչներն են, 40—50, հոգի որ ճարահատ իրենց խանութները օրական քանի մը ժամ լիւր բանին:

Սպանուածներու թիւը, ըստ նոր տեղեկութեանց, մարտ 10-ից ապրիլի 10ը, 100-ի կը հասնի: Շատ մը դիակներ անմիջապէս պահուած էին: Հիւսկապետներու և այլն ջանքերով հազիւ այդ դիակներէն մաս մը կարելի եղաւ մէջտեղ հանել: Սպանուածներու մէջ յիշեմ քանի մը անուաններ: Մկրտիչ Տէր Դեդրդեան՝ պատուական երկուստարկ մը և արմենականներու տեղւոյս կարևոր ընկերներէն մէկը: Մկրտիչ Մաքսապետեան՝ քաղաքական ժողովի անդամ: Սահակ Սապունճեան՝ Արարուց թաղ խորհրդոյ նախագահ, Աշրքեան Մանուկ (Արարք թաղէն), պէզազ Պետրոս (Ս. Յակովբի թաղէն): Ֆէրիզեան Կարապետ՝ լաւ երկուստարկ մը: Տէր Կոստանտինեան Աբգար, Բէզապետեան, Չափկունեան և այլն—բոլորը՝ առևտրական և արհեստավարներ: Քաղաքէս դուրս, ճամբաներու վրայ ևս, կապանեն ու կը կողոպտեն անխնայ՝ մանուկները գաղանացած համախմբները...

Վերջին շաբթուան հոս եկաւ Զեյթունի փաշան՝ ամենախիստ խուզարկութիւններ ընելու նպատակով, բայց ցարդ բան մը չէ եղած:

Զօրաց թիւը 4000-ը կանցնի, մինչ ստոյգ տեղեկութիւն ունիլը որ մեծ քանակութեամբ դօրքեր կուզան դէս: Քաղաքը գրեթէ պատերազմական վիճակի մէջ է: Հարիւրական դօրքեր լեցուած են շրջակայ Կուռուբաշ, Շուշանց, Կարմրաւոր, Սղբաշ, Կողբանց և միւս հայ գիւղերն ու վանքերը՝ պաշտպանելով քաղաքը: Հայկական բոլոր թաղերու մէջ դօրքեր են լեցուած, ինչպէս Խանիկիւնեանց, Տաշանեանց, Տէր Թովմասեանեանց և այլ աներ ու սրճարաններ: Կան նաև 150 համախմբներ:

Ու այս ամենը իբր թէ սահմանադիւրի համար են !!: Ժողովուրդը գրեթէ կիսամեռ է՝ սովի և սուրի միջև: Դրութիւնը բացարձակ կերպով անուանելի է: Երեւակայեցէ՛ք՝ քաղաքաբնակներն իսկ, քիչ-շատ՝ բարեկեցիկ ու պատուաւոր՝ համարուողները, գարի, կորեկ, թեփ, ձէթով ճաշ, բուսի կուտեն...: Սովածահուլեան և հիւանդութեան բաղձաթիւ զոհեր կը պատահին ամէն օր...:

Շփոթուած ու ինքզինքը կորսնցուցած ժողովուրդին կողմէն 4000-է աւելի ստորագրութիւններով հանրապետութիւն մը պատրաստուեցաւ՝ կառավարութեան և պետութեանց հինգ պահանջներ ներկայացնող, բայց ցարդ ստոր սրբիւնքը յայտնող ոչինչ չիմացանք:

Ամէն ինչ սարսափելի թանգ է. 1 չափ ցորենը 100—120 դուրուշ, 1 լիւր խաղ՝ 100 դուրուշ, 1 լիւր պանիրը 60 դրշ, 1 լիւր ժամիրը 30 դրշ, և այլն:

Ու այս ամբողջ դժոխային դրութեան հանդէպ, ժամէ ժամ

նոր անակնկալներու, նոր սարսափներու կողմենք...: Թուրքերը խիստ զրգուած են և նորանոր կոտորածներու կը պատրաստուին, որոնց մէջ մտնի, հրէշային սպերը հրկայական դեր կը կատարեն...:

29 ապրիլ (հ. ա.) 1908

Վ Ա Ն

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆՑԻ

## ՆԱՄԱԿ ԿԱՂԺԱԿԱՆՑԻՑ

—o—

Մի քանի օր սրանից առաջ՝ Ալաշկերտի վրայով տեղս հասան 40 հոգի երկուսն «գաղթականներ», 10-էն 50 տարեկան: Սրանք գալիս են Մուշի, Բաղէշի և Ալաշկերտի շրջաններից: Զուլուժի երկրից դէպի Ռուսաստան «աղատ շունչ առնելու», համար փախստականները ճանապարհին «անապատ կողմեր» բաժանուելով՝ կարճ ճանապարհը կորցնում են և չորս օր մնում են լեռներում, ապրելիս են հզել խոտ ուտելով: Անօթութեան և ցրտին չզիմանալով՝ 17 տարեկան մի աղջիկ մեռել է առձեռն սահմաններում:

Գաղթականները այնպիսի սրտածմլիկ պատմութիւններ են անում, որ մարդու մարմնը են փշաքաղուած: Ինչպէս երեւում է Հայաստանի բոլոր կողմերում մեծ թուով դօրքեր են կեդրոնացուած:

Ալաշկերտից մի գաղթական ասաց հետեւեալը. — «Երբ Կարնոյ կողմերից դօրքեր եկան Ալաշկերտով Վան անցնելու, նրանք կանգ առան Զլկան գիւղի մօտ, տեսան որ մօտիկ գետակից զիւրութեամբ շէր կարելի անցնիլ, որովհետեւ ջուրը վարարել էր և կամուրջ չկար, ուստի Սալթանի հաւատարիմ՝ գինուորները ստիպեցին հայ գիւղացիներին գուրս հանել իրենց սայլերը, լցնել գետը և այդպիսով անցնելու համար կամուրջ պատրաստել: Հայ գիւղացիները հրացանի հարուածների տակ գետ են մոտում» իրենց սայլերով, ուզած «կամուրջ» պատրաստում են: Երկու թաղուր դօրքը անցնում է, բայց եթմ հայեր տեղնուտեղը, գետի մէջ մեռնում են ցրտից: Զինուորները այնքան բարի են լինում, որ նախապէս հայ գիւղացիներին աներն էլ կողոպտում են և իջեւանած ժամանակին ամէն վայրագութիւններ կատարում:

Գաղթականները ասում են, որ խառնութիւնները այնքան անտանելի են դարձել, որ ոչ դրի աչքին ոչինչ չի երեւում՝ ո՛չ սուսն, ո՛չ ստացուածք, այլ ամէնքն կուզէին գաղթել, մի կերպ հոգինին ազատելու, եթէ այդ կարելի լինէր: Գա է Ընդհանուր դրութիւնը:

Ապրիլ 17, (հ. ա.) 1908

ԿՈՐԻԿՆ

Կաղզուան

Հնչակեան Ս.-Դ. Կուսակցութեան մասնաճիւղերը, Կուսակցութեան քոյր շրջաններում, իրենց միջավայրին քոյր տուած պայմանների մէջ, Մայիս 1-ի բանուորական սօճի սօճեղ են:

Ստորեւ հրատարակում ենք Թիֆլիսի մասնաճիւղի և Պարսկաստանի Դարձ. Յանձնախմբի բաց քողած քողացիկները.

#### ՀՆԶԱԿԵԱՆ ՍՕՅԻԱԼ ԴԵՄՕԿՐԱՏ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ

Պ Ե Ր Ե Մ Ե Ր Ն Ե Ր Բ Ե Ր Լ Ե Ր Ե Ր Կ Ե Ր Ն Ե Ր Ի՝ Ժ Ի Կ Ե Դ Բ

#### ԱՇԽԱՏԱՆԳԻ ՈՐԴԻՆԵՐԻՆ՝

##### ԱՅՍՈՐ ՄԱՅԻՍԻ ՄԷԿՆ Է.

Մայիսի մէկը աշխատանքի որդիների տօնն է: Աշխարհի բանուոր-աշխատուոր դասակարգին պատկանողները շահագործում, ճնշում և կեղեքում են կապիտալիստներից և նրանց պնակալէղ միապետներից, թագաւորներից, միւնիստրներից և այլ կարգի պարագիտներից: Դրամատէր-կապիտալիստ դասակարգը կողոպտում և հարստահարում է գիւղական և քաղաքի բն-ջաղուրդներին, պրօլետարներին, շահագործելով նրանց ֆիզիքական ուժը, իր կապիտալը մեծացնելու և աւելի մեծ չափերով կողոպտելու՝ մեծամասնութիւն կազմող բանուոր-աշխատուորին:

Ներկայ բռնապետական և բուրժուական բոլոր կառավարութիւնները, իրենց բոլոր պաշտօնական հաստատութիւններով, իրենց ամբողջ պետական միա-նիւմով՝ պաշտպանում են բուրժուակապի շահերը, ի վնաս սեպհականադուրկ աշխարհի՝ աշխատուորնե-րի և բանուորների:

Դասակարգային գիտակցութեան վրայ կեցած աշ-խատանքի որդիների ձգտումն է՝ ոչնչացնել մտանա-ւոր սեփականատիրութիւնը և համայնացնել արտադ-րութեան և փոխանակութեան բոլոր միջոցները, որի իրականացմամբ կը թաղաւորի փրկարար և երջանկա-բեր Սօցիալիզմը:

Սկսած 1889 թուի յուլիս ամսին Փարիզում կայա-ցած սօցիալիստների միջազգային կոնգրէսից՝ Մայիսի մէկը դարձել է բոլոր աշխատուորների տօնը: Նւ ահա՝ այսօր է, որ ամբողջ աշխարհի բնջաղուրդի դա-սակարգը մի սիրտ, մի հոգի դարձած տօնում է այդ մեծ տօնը, որով ահ ու սարսափի մէջ է պահում աշխարհի բոլոր շահագործող կեղեքողներին, որով-հետեւ մայիսի մէկը բոլոր կեղեքուածների արմնաց-ման և դասակարգային ինքնաճանաչութեան գալու-օրն է:

Այսօր է, որ բոլոր երկրների բանուորները, աշ-խատուորները, կեղեքուածները և օրավարձով ապրող-ները, պահանջում են՝

1. Ուժ ժամեայ բանուորական օր.
2. Բոլոր քաղաքացիներից կազմուած միլիցիայի հաստատումն.
3. Պատերազմների վերացումն.

4. Աղգերի ինքնորոշման և ազատութեան իրաւունք:

5. Աշխատանքի անընդունակ բանուորներին և բանուորուհիներին կենսաթոշակ:

6. Ընտրութեան իրաւունք քառանկամ ֆոր-մուլացով առանց սեռի, կրօնի և ազգի խտրութեան.

7. Բացարձակ ժողովրդապետութեան հաստա-տումն.

Այսօր բոլոր գիտակից աշխատուոր բանուորները՝ ֆարիկաներում, դաւոյներում և շահագործութեան բոլոր վայրերում, դադարեցնում են աշխատանքը և կռու շարքերով ու մարտագոյ երգերով լցնում են փո-ղոցները, տարափեցնելով բոլոր կեղեքողներին:

Արդ, ի՞նչպէս պէտք է տօնենք մենք այս մեծ տօնը Ռուսաստանում:

Թիֆլիսե Ռուսաստանում ժամանակաւորապէս թագաւորող ռեակցիայի շնորհիւ հնարաւորութիւն չկայ հրապարակով տօնելու և ցոյցեր կազմակերպելու այդ նուիրական օրը, որովհետեւ յետադէմ տարրերը և բուրժուական զլուխ են բարձրացրել և սպառնում են բանուորներին փողոց շարտել: Ուստի մենք առաջար-կում ենք բոլոր գիտակցող աշխատուոր բանուորներին՝ խաղաղ կերպով անցկացնել այդ օրը, որովհետեւ այդ է պահանջում բնդհանրութեան շահը:

Նւ որպէսզի իւրաքանչիւր գիտակից աշխատուոր բանուոր հնարաւորութիւն ունենայ գէթ որեւէ նուիրական բանով չաւերժացնելու այդ նշանակալից օրը, մենք կ'օջ ենք անում և առաջարկում ենք բոլոր նը-րանց, որոնց սրտին մօտ է այդ նուիրել Մայիսի մէկի իրենց աշխատավարձը թիւրքահայ սո-վեալներին օգտին, որոնք սուլթանական բա-ցարձակապետութեան և անլուր խոզութեանց շնոր-հիւ առաջ եկած տնտեսական քայքայման զոհերն են և հեծում են բռնակալական դաժան լծի տակ:

Սրանով ցոյց կտանք մեր քաղաքական հասու-նութիւնը և կապացուցենք, որ գիտենք մեր մերձա-ւոր, բնկերջ, եղբոր մասին մտածել:

Ընկերներ՝ միանա՛նք, խտացնե՛նք մեր շարքերը և կազմ ու պատրաստ լինենք քաղաքական անակնկալների հանդէպ:

Հեռու հորիզոնում փայլում է Ազատութեան վառ արշալոյսը:

Մօտ է փրկութեան և Ազատութեան ժամը:

Դռնէնք միաձայն՝

ԿԵՅՅԻՒՄԻ ՄԱՅԻՍԻ ՄԷԿԸ

ԿԵՅՅԻՒՄԻ ԱԶԳԵՐԻ ԱԶԱՏՈՒԹԻՒՆԸ

ԿԵՅՅԻՒՄԻ ՓՐԿԱՐԱՐ ՍՕՅԻԱԼԻԶՄԸ

ԿԵՅՅԻՒՄԻ ՀՆԶ. Ս.-Դ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Հնչ. Սօց.-Դէմ. Կուս. Թիֆլիսի Մամուճիւղ  
Թիֆլիս, 30 ապր. 1908 թ.

# ՀԱՅԱԿԵԱՆ ՍՕՅԻՍԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ ՊՐՕԼԵՏԱՐԵՆՐ ԲՈԼՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ ՄԻԱՑՆԵՐ Ս Ա Յ Ի Ս Ի Մ Է Կ Ը

1889 թ. աշխարհիս բոլոր երջանիկները, աշխատանքը շահագործող, հարստահարող և բռնաբարող բոլոր օտարակերները հաւաքուել էին Փարիզ և այնտեղ տօնում էին իրենց յաղթութիւնը, միլիոնաւորների արցունք-բնակիչով արբած, զուարճանում ու ցնծում էին անհամար թշուառների ողբաձայն երաժշտութեամբ: Հէնց միւսնոյն ժամանակ, նրանց կողքին, բոլոր բնագոյրիկների, թշուառների և քաղցածների ներկայացուցիչները համախմբուած, որոշեցին տօնել մայիսի մէկը. բնութեան այս կատարեալ հրաշալի և կենսաբեր յաբութեան օրը:

Այն օրուանից, համաշխարհային պրօլետարիատը մայիսի 1-ին, ամէն տարի, իր միլիոնաւոր բանակով ոտքի է կանգնում մէկ մարդու պէս, և ամէն անգամ աշխարհաստան ձայնով յայտարարում է.

Կեցցէ՛ք աշխատանք, և հաւակում թէ. —

Մայիսի մէկը աշխատանքի ազատութեան տօնն է.

Մայիսի մէկը երջանկաբեր մեծ ապագայի կառապեան է.

Մայիսի մէկը համաշխարհութեան անտեսական ու բարոյական ազատութեան սրբադան օրն է:

Մայիսի մէկը, դասակարգերի անհաւասարութիւնների իսպառ ոչնչացման և խորտակման համար կազմակերպուած աշխատաւորների կռուի օրն է:

Այսօր կապիտալիստներն ու նրանց ամենատեսակ պաշտպաններն բռնում են ահաւոր դողով, և իրենց համար սոսկալի ապագայի հեռանկարը տեսնելով, պրօլետարների մարտական յաղթական բանակի դրօշի առաջ, հաւաքում են իրենց բոլոր դժերը, անասման կատաղութեամբ լցուած, օրհասական հզօրագոյն ձիգ են թափում, իրենց մարդասպան և աշխարհաւեր տիրապետութեան օրերը երկարացնելու:

Այսօր բանաւորների անհամար խմբերը, իրենց կարմիր դրօշակներով, կուռ համաշխարհութեամբ նետում են ռազմի դաշտը և հնչեցնում մարտահրաւերը. — Բոլոր երկրները աշխատաւորներ՝ միացէ՛ք:

Աշխատեալ, Հասարակեալ և Նշխարեալ նշանաբաններով բարձրացրած դրօշակները իրենց ծաւրերի տակ հովանաւորած բանակի-պրօլետարիատի բերանով, այսօր, դարձեալ անկուռն ու անվհատ, իրենց թանկագին կեանքերի գնով, ազդարարում են անհաշա կռիւ բոլոր բռնաւորների դէմ:

Այսօր, ինչպէս միշտ, դարձեալ ներկում է մայր հողը, իր հարստատ և շարքաշ զաւակների արիւնով, արիւն, որ անքակտելի օղակ է դառնում միութեան և գրաւական՝ սրբադան ուխտի, անդաւաճան ու յարստեւ պայքարի:

Հնչակեան ընկերներ, Գուք, որ առաջին անգամ հայ կեանքի մէջ բերեք Մայիսի 1-ը, Գուք որ Ձեզ բաժին ընկած ամենադժուար և դժան միջավայրում, հնչեցրեք յաղթական մարտահրաւերը, Գուք որ ամէն տարի Ձեր ուխտեալ շարքերով ծածանեցնում էք նուիրական դրօշակը, և այն, միշտ Ձեր արեան գնով, ողջոյն Ձեզ:

Հնչակեան ընկերներ, Ձեզ՝ որ վիճակուած է քաղաքական մի աննման կռիւ մղել, անօրինակ իր դժնէ

պայմաններով, իր դժուր իրականութեամբ և իր խաւարկուռ շրջապատով, Ձեզ որ արուած է տանել յաղթական դրօշը երկու ամեհի Բռնակալութեանց և նրանց սնուցած անհամար բռնաւորների ու շահագործողների դէմ՝ յանդիման, Ձեզ որ արեան աւապանը մկրտեց բերաւորների հառաչանքն ու ողբը, օրհնեց ու վեհ գազաւարը միացրեց, Ձեզ ողջունում է Մայիսի Մէկը, փրկարար աւետիս տալով մեծ ապագայի երջանկութեան անունից:

Կեցցէ՛ք Մայիսի Մէկը, ու թող փշրուին Աշխատեալ կաշնակուող ժանգոտ շղթաները, թող ստանին Հասարակեալ ու Նշխարեալ թշնամիները:

Կեցցէ՛ք ազգերի իեղբայրութիւնն ու համաշխարհութիւնը:

Կեցցէ՛ք միջազգային Սօց.-Դեմօկրատիան. —

Կեցցէ՛ք Հնչակեան Սօց.-Դեմ. Կուսակցութիւնը.

Հնչակեան Կուսակցութեան Պարսկաստանի Գործադիր Յանձնախումբը

1908 Մայիս 1-ին

## ԱՐԵՒԵԼԵԱՆ ԽՆԴԻՐԻ ԾՈՒՐՁԸ

Քաղաքագիտական աշխարհի ուշադրութիւնը այժմս կեդրոնացած է Արեւելք: Արեւելեան Խնդիրը դարձել է մի հսկայ առանցք, որի շուրջն են ներկայումս դառնում քաղաքական զլխաւոր բաղկացութիւնները և ամէն տեսակի խորաւանանքները:

Մինչև վերջերս, ըստ երևոյթին, խաղաղ էր Թուրք Բըւնապետութիւնը, նա վարում էր իր բուսական կեանքը և ազատ ձեռք վայելում իր ներքին ճիշտութիւնի, հալածանքների և հարստահարութիւնների մէջ: Բունապետութեան այդ աւարքը ծանաւոր ուշադրութեան և եւրոպական աղմուկի չէր արժանանում, որովհետեւ անցած-գարձածից եւրոպական կապիտալիստները շատ մեծ ֆուսանքի չէին ենթարկում: Ուրիշ է խնդիրը այժմս, հիմա ամբողջ Եւրոպան դէպի Արեւելք է փոխադրուել, որով արդարանում է այն տեսութիւնը թէ Արեւելեան Խնդիրը իսկապէս Արեւմտեան Խնդիր է:

Ընդհանուր հիւանդութեան ակտանիշը այս անգամ եղաւ Միարմիցայի երկաթուղային զիծը: Ասարօ-Հունգարիան իր այդ քայլով խախտեց այն հասկացութիւնը, որ գոյութիւն ունէր՝ 1897-ից ի վեր՝ իր և Ռուսաստանի միջև:

Ռուսիան իր Արեւելեան հաշիւների կարգադրութիւնը յետաձգել էր Մանչուրական արկածախնդրութեան պատ. ճառով:

Մուկղէնում կերած հարուածից յետոյ՝ նրան դեռ ժամանակ էր պէտք իր ուժերը վերակազմակերպելու, որպէսզի մի օր կարող լինէր յաջողութեամբ ձեռք առնել Արեւելեան խնդիրը՝ իր շահերի տեսակէտից: Եւ ահա՛ իրերը այդ դրութեան մէջն էին, որ Միարմիցայի զիծը քաղաքական մի պայթիւն յառաջ բերեց իր երեւմով:

Յուզումը, շուարումը, կասկածանքը մի բոլե ընդհանուր եղաւ: Ռուսիան պարզ տեսաւ, որ Ասարօ-Հունգարիան իրեն ձեռք տուած ժամանակին, միւս ձեռքով էլ՝ տակից իր սեպհական գործերն էր կարգադրում ի ֆուստ այն փոխաբաժ հասկացութիւնների և համաձայնութիւնների՝ որ արդէն գոյութիւն ունէր երկու մեծ պետութիւնների միջև: Սուլթանի՝ 1903-ից ի վեր, մի կարգ յանձնաւորութիւնների խնդիր կար. բնութեան սեղանի վրան էին դրուած Մաւ կեդրոնայի դատարական բարենորոգումները, և այդ նշա-

նախալից րոպէներին էր, որ զիւսնագիտական ջրերը վա-  
րարել սկսան: Ու ձինչդեռ Ռուսական Հասարակական կար-  
ծիքը իր հարեանին դաւաճանողի պատկեր էր տալիս՝ Ռուս  
զիւսնագիտութիւնը, սակայն, իր տնկայանի զօգուհութիւնը  
և սրամտութիւնը ասանձելով հանդերձ, պետական իր ընդ-  
հանուր վիճակն աչքի առաջ ունենալով, սկզբում բա-  
ւականացան պաշտօնապէս յայտարարելով թէ, որով-  
հետեւ երկաթուղային նոր գիծը Բալքան Թերակղզու  
մէջ վաճառականութեան զարգացմանը պիտի նպաստէր և  
միջոց պիտի հանդիսանար երկրի բնական հարստութիւն-  
ների շահագործմանը ու զարկ տար տեղական ժողովուրդ-  
ների յառաջագոյնութեանը, ուստի ինքը այդ ձեռնարկին  
թշնամական զգացումներով չէր կարող վերաբերուել, քա-  
նի որ ինքն այդ իսկ երկրների և ժողովուրդների բարե-  
կամն էր, և նոյն իսկ արտոնաւոր պաշտպանը: Այդ նկա-  
տումներով, որպէս թէ, Ռուսիան բաւականացաւ միայն այն  
յայտարարութեամբ թէ ինքը ո՛չ միայն վնասակար, այլ  
շատ օգտակար էր տեսնում երէնթալի երկաթուղային  
արշաւանքը, միայն, ստում էր, երկաթուղային այդ զիջում-  
ները ձեռք բերելու ժամանակը շատ անյարմար էր,  
քանի որ Մակեդոնական բարենորոգումների պատճառով  
Աստրիան պահանջ ուղի դեր ունէր, իսկ իր նոր զիրքովը  
նա խնդրողի դրութիւն էր տեսնում և այդպիսով  
աւելի զաւնում Մակեդոնական բարենորոգումների անյա-  
ջողութեանը և Սուլթանի յաղթութեանը: Ռուսիան արտա-  
քուստ այդ ձևով էր արտայայտում իր զիրքը:

Բալքանեան փոքրիկ պետութիւնները խնդրի վրայ նայե-  
ցին բարձրակէտով ուրիշ տեսակէտից: Վերջին տարիները Ռու-  
սիայի զիրքը նրանց համար մի առեղծուած էր դար-  
ձել: Միւրջշտեղի ծրագրից յետոյ Ռուսիան մի առանձին  
փաթիկաւորութիւն ցոյց չէր տալիս ինչ աճ աւարելու  
Բալքանեան Մլան ասորերին, ինչպէս որ այդպիսի ձգ-  
տումներ արտայայտում էր առաջները նա պատմական այդ  
ակաից յետոյ՝ ծառ էր մի տեսակ անգործութեան մէջ և  
ստիպել որ անշարժութիւնը ամէնքի տիրապետող ուղեղի-  
մէն էր. մինչդեռ նոյն այդ րոպէներում Աստրա-Հունգարիան  
ստեղծուած կացութիւնը յօգուտ իր շահերին էր դարձնում  
և յաջողում շահերի նորանոր պատաններ կորզելու Թուրք  
Բանակաւորութիւնից: Փոքրիկ պետութիւնների ընդհանուր հա-  
մողումն այն եղաւ, որ Աստրիայի վերջին ձեռնարկները  
եկան ամրապնդելու այն զաղափարը, թէ Ռուսիան  
այլևս ձեռք էր բաշել Բալքաններէից և լուելայն համա-  
ձայնէր, որ այլևս այդ կողմերում բացարձակ տիրապե-  
տող լինի Աստրիական և Գերմանական շահը, ուրեմն նը-  
րանց տնտեսական ու քաղաքական ազդեցութիւնը:

Ռուսական ժամուրը մի առանձին աղմուկ բարձրացրեց  
ընդհանուր այդ հեռանկարի առաջ: Ծառերը պատերազմը  
անխուսափելի նկատեցին, և Աստրիային տեսան ճիշտ  
այն թշնամ ահալանի զիրքի մէջ, ինչոր նա ունէր դեռ 18  
և 19-րդ դարերում:

Պատերազմի իրականութիւնը սակայն չէր կարող դալ,  
որովհետեւ հէնց ինքը՝ ազադակող Ռուսիան դեռ իր վեր-  
քը չէր գտել և երկար ժամանակի համագտութեան  
կարիք ունէր: Մնում էր մի փոքր ուելի գործօն դերի մէջ  
ծառ և այժմ այդքանով միայն բաւականանալ, մինչև որ  
յաջողութեան նոր պայմաններ ստեղծուէին: Այդպէս էլ եղաւ:  
Եթէ Բեռլինի Դաշնագրութեան 25-րդ յօդուածը ար-  
բանագրում էր, ըստ աւստրիական բացատրութեան, երկա-  
թուղային գծեր կառուցանել,—այդ ձեռնարկներից մեծա-  
պէս օգտուողը պիտի լինէին և՛ այն ժողովուրդները, որոնց  
բարօրութեան ձայնն որ Ռուսիան խօսք էր առնում և  
խօսում, ուրեմն նա չպիտի հակառակէր Միարօվիցայի

գծի կառուցմանը, այլ պէտք է ողջունէր այն՝ որպէս քա-  
ղաքակրթական մի ազգակ Բալքաններում: — Սա էր ողին  
այն շրջաբերական-ճանուցողի, որ Իպլօրիկն ուղղեց առ-  
ական քաղաքագէտներին: Բայց այդ շրջաբերականի մէջ  
առուաց արտաքին գործոց նախարարը մի ուրիշ արա-  
մագրութիւն էր էլ ցոյց տուել, այն է՝ թէ միւս պետու-  
թիւններն էլ իրենց կողմից կարող էին այնպիսի ձեռնարկ-  
ներ կատարել, ինչպիսին որ եղած էր Աստրիայի կողմից,  
և որ՝ այդ դէպքում նրանք կարող էին իր աջակցութիւնը  
ստանալ՝ իրենց ձգտումների իրագործման նկատմամբ:

Թիւրքիան մի տեսակ դրաւի առի տեսնում պետութիւն  
էր, երբ նա զբաւատեցրեց մէկն ու մէկին բաժին էր հանել,  
հարկաւոր էր որ նոյնը անէր և՛ միւսների նկատմամբ՝ այդ  
է եղած ընդհանուր վարուեցողութեան գիծը, արեւելեան  
պատմութեան ընթացքում:

Եւ արդարեւ, Աստրիայի օրինակին հետեւել ուղեցին  
Իտալիան ու Սերբիան՝ ճանապարհաւ: Սրանք էլ իրենց  
պահանջների ցոյցակը երևան բերեցին:

Բայց անդրադառնանք Մակեդոնիային:

ՄԻԻՐՑՇՏԵԳԻ ԾՐԱԳԻՐԸ — Եթէ բարօն էրէնթալի  
անջատ այդ գործունէութիւնը անմիջական պատերազմի պատ-  
ճառ չդարձաւ, դեռ այդ տեղից չի կարելի եղրակայնել,  
որ նա իր զօրաւոր ազդեցութիւնը չպիտի ունենայ Մեր-  
ձաւոր Արևելքի վրան. ընդհակառակը՝ նա պատմական  
մի շրջադարձ է կազմում: Որքան էլ որ զիւսնագիտական  
ճիգեր թափուին այսուհետեւ, դարձեալ Միւրջշտեղի Ծը-  
րագրի հիմունքը երբեմնից չի կարելի ազատել այդ  
Ծրագրից իր էութեամբ խախտուել է, և դա ո՛չ թէ դէպի  
վաւր, Մակեդոնական գործերի տեսակէտից, այլ դէպի  
լաւը և դէպի բեղմնաւոր ապագան:

Սուլթան Համիտը ուղեց զիւսնագիտական մի խաղ խա-  
ղալ, բայց տուժողը դարձեալ իր Բանակաւորութիւնը եղաւ:  
Եթէ բարօն էրէնթալի ձեռնարկին ստորագրելով՝ դիտաւո-  
րութիւն ունէր Միւրջշտեղեան ծրագրի երկու սիւների մէջ  
ճեղք յառաջացնել և նրանց հին ծրագրերը ու հակա-  
մարտութիւնները երևան բերել, որպէսզի ինքը մէջոտեղից  
լողալ,— այդ խաղը իր դէմ դարձաւ:

Միւրջշտեղեան ծրագրի ողին էր Թիւրքիայի տիրապե-  
տութիւնը Մակեդոնիայում պահել, հարեանցի մի քանի բա-  
րեփոխութիւններ մտցնելով: Աստրիան և Ռուսիան եւրո-  
պական իշխանութիւնների արտաւերակներն էին նկատուած՝  
այդ Ծրագրի գործադրութեան նկատմամբ: Որքան որ այդ երկու  
հակաշահ պետութեանց համաձայնութիւնը անբնական նկա-  
տուեց ժամանակին, այնուամենայնիւ դա շատ հասկանալի  
էր, որովհետեւ նրանք դեռ ժամանակը եկած չէին համարում՝  
իրենց հաշիւները ծաքրելու տեսակէտից, հարկաւոր էր  
խնդրել յետաձգել, և նրանք այդ ուղին էլ բռնել էին: Ան-  
ցաւ 5 տարի և Միւրջշտեղի ծրագրի շատ քիչ կամ բնա-  
բարեփոխութիւն չբերեց Մակեդոնական ժողովուրդների՝ կեան-  
քում. իրերը շարունակեցին ընթանալ ըստ թրքական ի-  
թէ և եւրոպական սպանելով առաջնորդուող ժամաւորներէս կար,  
ինչպէս և պետութիւնների ներկայացուցիչներից կազմուած մի  
ժինանսական Ծանօնաժողով:

Երբ Միւրջշտեղի Ծրագրից իր զլխաւոր գծերի մէջ  
սրժուեց, դեռ 1905-ին, Էօրդ Լանդաւանը մի շատ կո-  
րովածիտ քննադատութիւն ուղղեց դէպի այդ Ծրագրից: Նրա  
պարզ եղրակայնութիւնն այն եղաւ, որ զճաղրուած որ և է  
բարենորոգում, ինչքան էլ թեթիւ և սրժ եղած լինէր, այ-  
նուամենայնիւ չպիտի իրագործուէր և որ և է լուրջ ար-  
դիւնը չպիտի տար, քանի որ այդ երկրի վարչական և գոր-  
ծադրական իշխանութիւնը դանդաղ էր թուրք կառավա-  
րութեան: Երկուսուսներն ձեռքին ինչքան էլ ժանդարմե-

ընդ 44 տարեկան խոշորագույն կերպով վերաբերուելին դեպի իրենց պաշտօնը, ինչքան էլ Ֆինանսական Գանձնաժառանգությանը լինելը և իր անհատականությանը գիտակցի, այնուամենայնիւ նրանք անկարող էին որ և է գրական արդիւնք յառաջացնել, քանի որ այդ ծարձիկների գործունէութեան իսկական վարկը թուրք պաշտօնէուն թիւնն էր և թրքական գործարարների թիւը նուազեցրուած չէր՝ երկրի իրական պահանջին համապատասխան լինելու չափ։

Եւրոպական ինքնաշարժիկները բոլորովին արդարացան և Մակեդոնական իրօք այսօր այն է, ինչոր էր դեռ 1903-ին։ Չնայելով որ 5 տարիներ են անցել, բայց փոխուած ոչինչ չկայ, և այդ պատճառով, որ բարենորոգումների ներդրուածութեանը մինչև այսօր 10,000 մարդ է սպանուել այդ երկրում։ Դատարանական արդարադատութիւնը միշտ թրքական է, այսինքն բրիտանական և մահմեդականը համահասար իրաւունքներ չունին։

Իրերի այս դրութեան մէջ, երբ ասում ենք թէ Միւրջշտեղի Ծրագիրը խախտուած է, դա ո՛չ թէ ասել է, թէ Մակեդոնական բարենորոգումների և ազատագրութեան գործը վերջնականապէս խաթարուած և ջնջուած է, բոլորովին հակառակը, այլ այն՝ որ նա դուռն է բոլորովին նոր հիմունքների և նոր հասկացողութիւնների վրայ, որոնց էական մասը այն պիտի լինի, որ Մակեդոնիայի բարենորոգումների գործադրական և փարզական իշխանութիւնների մէջ Սուլթանական Բանապետութեան պաշտօնէութիւնը տիրապետող և ղեկավարիչ ձեռք չախտի ունենայ այլևս, — այդ նպատակին հասնելու համար Անգլիական կամ Ռուսական վերջերս առաջարկուած ծրագրերից որն էլ որ ընդունուելու լինի, նրանց մէջ անպատճառ պիտի ներմուծուի և ընդունուի մի այնպիսի արամադրութիւն, որով բարենորոգումների գործադրութեան բախտը և նրա ծաւալ ստանալը կախուած չախտի ունենայ թուրք տեղական պաշտօնէութիւնից և Կեդրոնական իշխանութիւնից։ Ահա՛ այս անսակեցող է որ Միւրջշտեղեան ծրագրի հիմունքները փոխուել են վերջին անցուրդների պատճառով։

ԱՆՍՏՐՕ-ՀՈՐՆԳՎԱՐԻԱՅԻ ԱՆՋԱՏ ԳՈՐԾՈՒՆԵԼՈՒԹԵԱՆ ՀԵՏԵԻԱՆՔԸ։—Սուլթան Համիդը իր խելքով կարծեց թէ դիւանագիտական մի մեծ յաջողութիւն ձեռք բերեց Միւրջշտեղի գծի վերջնական լծել իր և իր խորհրդականների նպատակն էր մեծ ու փոքր պետութիւնների հակամարտ շահերից օգտուելով՝ Մակեդոնական բարենորոգումները ոչնչացնել, դրանով ո՛չ միայն իր նպատակին չը հասաւ, այլ բարբառով հակառակ իրողութեան առաջ իրեն գտաւ, և դեռ ապագային այդպիսի շատ իրողութիւններ էլ իր առաջը պիտի ցցուին։ Իրաւ է, որ պետութիւնները հակամարտ շահեր ունին, բայց այդ հակամարտութիւնները, չպետք է մոռանալ, որ միշտ ի վնաս թուրք Բանապետութեան են։ Աւելի քան 100 տարի է, որ Ռուսիան և Աւստրիան հակամարտ ոյժեր են հանդիսացել Բալքաններում, բայց նրանք իրարու դեմ սուր չեն քաշել Թիւրքիայի համար, — խիստ հակաճառութիւններից, դիւանագիտական յուղումնալի արշաւանքներից յետոյ՝ նրանք շարունակ համաձայնութեան են եկել՝ ի վնաս Թիւրքիայի։

Ինչ է Աւստրիայի ցանկութիւնը, — դա պարզ է։ Նա ուզում է ազատ և իրենից միայն կախումն ունեցող ճանապարհներ դէպի Միջերկրականը։ Իրաւ է նա այժմ սոք ունի Ալբանիան ի վրայ, բայց դա շատ էլ ապահով չէ։ Մի օր Բալքանի շատ դիւրութեամբ կարող է փակել Օտրանտոյի նեղուցը և այն ժամանակ Աւստրիայի առաջ ծովային ամէն ճանապարհներ կարող են դրոշմ և նա իր վաճառականական ու տնտեսական փոխադրութիւնների համար կախումն կունենայ Գերմանիայից այնպէս, ինչպէս որ Բուլղարիան և Սերբիան այսօր կախումն ունին

իրենից։ Իսկ դա ո՛չ միայն նուստացուցիչ է, այլ և՛ կործանիչ, կապիտալիստական օրէնքների հասկացողութեամբ, և որպէսզի ինքն ապագային Բուլղարիայի և Սերբիայի դրութեանը չընկնի, ուստի, կապիտալիստական անհրաժեշտութեամբ, նա ձգտում է դէպի Հարաւ և դէպի Հարաւ-Արեւելք։ Ուրեմն Աւստրիայի ձգտումների հիմունքներից մէկը առաջանում է նրանից, որ մի օր Ալբանիան ծովը կարող է mare clausum դառնալ, ուստի հարկաւոր է այժմեանից ճանապարհներ ապահովել դէպի Միջերկրական, նայն իսկ, եթէ հնար է, Իտալիային արտաբերել Ալբանիան ծովի արեւելեան ափերից։ Ալբանիան ծովի արեւելեան ափերի տիրապետութիւնը Աւստրիան, մի որոշ աստիճանով, իրեն համար մահու և կենաց խնդիր է նկատուած։

Աւստրիայի այդ քաղաքականութիւնը այսօրուանից չի սկսուած, դա աւելի քան կես դարու անընդիմադրելի ձրգտում է։ Այն օրից, երբ Աւստրիան արտաքսուեց Ապպենինեան թերակղզու հիւսիսային մասից, այն օրից երբ կազմուեց Միացեալ Իտալիան, այլևս նրա առաջը ազատ ճանապարհ չէր ներկայացնում Ալբանիանը։ Հարկաւոր էր սուրիշ ուղիներ ձեռք բերել, և այդ պիտի լինէր այն ճանապարհը, որ Աւստրիական տիրապետութիւնները ուղղակի կը կապէր Միջերկրականի հետ, — դա պիտի լինէր Սալոնիկի միջոցով։ Այս կէս դար է, որ Աւստրիան խաղաղ թափանցումի քաղաքականութեամբ ամէն ջանք թափել է նախ Բալքան երկրների այդ մասը իր տնտեսական տիրապետութեան տակ առնելու և մասամբ արդէն հասել է իր նպատակին, աչքի առաջ ունենալով մի կողմից կապիտալիզմի յարաճումն զարգացումը իր երկրի մէջ, և միւս կողմից Բալքանեան տեղական ժողովրդների յետամնացութիւնը՝ ճարտարագործական արտադրութիւնների տեսակէտից։ Ուրեմն Աւստրիան որ 1897-ից ի վեր ստիպուել էր դեռ իր նուաճողական թափը դադարեցնել, այսօր նա ձեռք է առնում իր պատմական ուղին՝ drang nach Osten, և յառաջ է խաղում դէպի հարաւ։

Գերմանիան այդ յառաջխաղացումից աւելի քան մեծածնեմ շահեր ունի։ Կարգ առնեք՝ Աւստրիական հարու իջնելը Գերմանիային դէպի Միջերկրական անմիջական ճանապարհ բանալ ասել է։ Այն օրը երբ Միացեալ Գերմանիան դեռ ուրուագծուած էր Փրանկֆուրտի Պարլամենտի մէջ (1848), այդ օրից մեծ Գերմանիան ցանկութիւն էր արտայայտում ծրագրը ընդհանուր գերմանական աշխարհի գլուխը նկատել և այդտեղից իջնել դէպի Միջերկրական ու հեռաւոր հորիզոններ։ Բայց այդ օրերում դեռ Միացեալ Իտալիա չկար։ Միացեալ Իտալիան Մեծ Գերմանիայի յառաջ ընթանալու այդ հասանքի ուղղութիւնն էլ փոխեց, և այս անգամ ճանապարհը պիտի անցնէր Թրքական երկրներով դէպի Սալոնիկ, — այս մասին Գերմանական ու Աւստրիական արտաքին քաղաքականութիւնը համընթաց և համաշահ են, և այսօր այն ինչոր Աւստրիական ձեռնարկ է համարուած, միևնույն ժամանակ է և՛ Գերմանական ձեռնարկ։

Արդ, Աւստրիան այստեղ պա հոգ չի ներկայանում, այլ քան զո ու—այսինքն նրա հեռաւոր կամ մոտաւոր նպատակը չէ երկրի այդ շերտերում ապահով թիւրքիայի տնկալութեան և ամբողջ աշխարհի տնկալութեան սկզբունքը, այլ՝ ընդհանրապէս իր վերջին ձեռնարկով սա աւելի զարծօն դիրք է ընդունում դէպի Եւրոպական այն ընդհանուր քաղաքականութիւնը, որի անսխալ փոխ նպատակն է, դաքերից ի վեր, Մեծ Թուրքին դուրս բռնել Եւրոպայից։ Քաղաքական ինչ բողբոջութիւններ էլ կազմուելու լինին, այդ բոլոր վերջնական նպատակէսն է Օոմանեան տիրապետութեան վերջ տալ Եւրոպայից։ Բոլոր հակամարտ ուժերը իրարու հետ



ոյժ եւ, որոնք ի նքն ավարտութեան են ձգտում.— պարզ է որ կապիտալիստական Հիմունք ունեցող բոլոր պետութիւնները կաճաչ ակաճաչ ստիպուած են ընդհանուր Համաձայնութեան գալ Արեւելեան Խնդիրը վճռելու։ Համար պատմականօրէն զորք դրուած այն երրորդ ճանապարհով, որով Համաձայնել չկարողացող պետութիւնները երկար ժաքառումներէն և Հակամարտ կռիւներէն յետոյ՝ եկել են այն եղբակացութեան, որ կռուի առարկայ եղող երկրները պատկանին տեղացի ժողովրդներին։ Այս է մինչև ցարկ ցոյց տուել պատմութեան ընթացքը։ Այսպէս էլ կլինի այս պարագային։

Անդրիան պարզ և կարուկ կերպով դրեց Մակեդոնիայի ինքնավարութիւնը։ միւս պետութիւնները Հակառակեցան և խորհում են ուրիշ բաղկացութիւնների վրայ, բայց իսկական խնդիրը այն է, որ այդ խորհրդակցութեանց արդիւնքէն դուրս չպիտի գայ այն, որ այդ երկրները աւելի սերտ կերպով կապուին Թիւրքիայի հետ և ոչ էլ այդ երկրի խնդիրը գոյուած է արտաքին անհամաձայնութիւնների պատճառով։ Ինչքան էլ մրցակից պետութիւնները օձապտոյտ ճանապարհների և կէս-Համաձայնութիւնների վրայ դրուած բաղկացութիւններ կազմեն, այնու ամենայնիւ այդ երկրի մէջ գործող յեղափոխական ոյժերը նրանց կատարեն արձատական վճիռների կշիռքին յենուել։ Այդպէս է եղել անցեալի մէջ, այդպէս էլ պէտք է լինի ներկայումս։

Պարզ իրականութիւնը, ուրեմն, այն է՝ որ կապիտալիստական պետութիւնները վերջերս աւելի միջաճիւղեցան Թիւրքիայի «նեքին» գործերի մէջ, ինչպէս որ սխալմ է յայտարարել «Երիտասարդ Թիւրքիան»։ ուրիշ խօսքով՝ Թիւրքիայի անկախութեան և անբաժանելի և անբաժանելի զաւարտարը դարձեալ դրուած է իր պատմական արժեքի վրան, այսինքն դա մի բանաձև է, որին յաջորդում է Հակառակ իրողութիւնը։ Եւ այսպէս էլ չի կարող լինել, քանի որ իրերի այդպիսի բնաւորութիւն առնելը Հրամայական է դարձնում Հէնց ինքը Թուրք Պետական կազմը և նրա մէջ եղող տարրերի իրարու չհարցացնող անհամասեռութիւնը։

Գերմանիային իրեն թիկունքին ունեցող Աւստրիան, Իտալիան, Բուլղարիան, Սերբիան, Մակեդոնիայում և Ալբանիայում գործող բոլոր ոյժերը՝ իրարու միախառնուած՝ մի ձուլ են կազմում՝ իրենց բոլոր տարբերութիւնների միջով, այն տեսակետով, որ նրանք բոլորն էլ զանազան առաջարկութիւններ են բերում և որոնց բոլորի էլ էական նպատակն է Մեծ Թուրքին դուրս վաճել Եւրոպայից։ Եթէ Թուրքի բոլորովին դուրս վտարուելու խնդիրը ուշանայ, գէթ չի ուշանալ Մակեդոնիայի ինքնավարութիւնը, որովհետեւ իրերը արդէն այդ ուղին են ընդունել, և Մակեդոնական Յեղափոխական կուսակցութիւնները ուրիշ ոչինչ չեն կարող անել, եթէ ոչ պատմութեան տուած կռուանները վրայ կանգնելով, Մակեդոնիայի ինքնավարութեան խնդիրը իրենց ծրագրի Հիմնաքարը դարձնել, — նրանք այդպէս էլ արել են։

Արուեստական միջոցներով մի հիւանդ կեանք կարելի է երկարացնել կարճ ժամանակով, բայց ոչ թէ ընդ միշտ։ Որոշ է, որ Մեծ Թուրքը Եւրոպայում գոյութեան իրաւունքը կորցրել է վաղուց, և կաղճուող ու կաղճուելիք բաղկացութիւնները նրան մի օր կսեն, որ այլևս իր դատը վերջացած է, և կարող է իր ճամպրուկը կապել ծովի միւս կողմը անցնելու։ Անկարելի է յառաջադիմութեան օրէնքները կտակցել։ Դեռ — Բեռլինի Դաշնադրութեան օրօք Մեծ Բուլղարիայի և Մակեդոնիայի ինքնավարութեան գաղափարին ծագացու թշնամի եղող Անգլիան,

այսօր ինքն է փաստում այդ մտքերի իրականացման արդարութիւնը։ Իր սահմանների վրայ «Բուլղարիա» ունեցող Ռուս ինքնավարութիւնը՝ Մուկոլէից յետոյ՝ փորձով Համաձայնեց, որ աւելի լաւ էր իր սահմանների վրայ Բուլղարիաներ ունենալ, քան այնպիսի ասիական մի պետութիւն, որպիսին է Թիւրքիան։ Բայց այս բալըրից՝ յետոյ՝ ժողովրդների ազատագրութեան գործը յաւիտեականօրէն կախումն չունի ժամանակակից դժուարեքից, որոնք կարող են կասեցնել, յապաղեցնել նրա ազատագրութեան գործը, բայց ոչ թէ իսպառ խորտակել։ Այսօր Բուլղարիան կան պետակից ժողովուրդներ, որոնք իրենց ազատագրութեան անուամբ տուել են ամէն տեսակ դժուարութիւն և պտորապտոյտ են այդպիսի շատ դժուարութիւններ տալու դեռ ապագային էլ, և այս ընդհանուր հնոցի մէջ ոչ կապիտալիստական պետութիւնները կարող են ճշտապէս իրենց ձեռքը անվանող պահել եռացած կաթնային մէջ և ոչ էլ Մեծ Թուրքը կարող է իրեն ապահով Համարել՝ միշտ աչքի առաջ ունենալով որ ընդլիմաղիր ուժեր կան իր առաջ։

Սուլթանական մի խաղով Միւրյշաէզի Մրադիրը ընկալւալ Մակեդոնական Խնդիր չկա՛յ, — սա մի երազատեալութիւն էր, որի մէջ ընկած էին նրանք, որոնք սրտի և մտքի ամէն թեթեւամտութեամբ թծեկահարում էին թէ, ուրեմն, այլևս Հայկական Դատ էլ չի կարող լինել։ Ո՛չ, կա՛յ Մակեդոնական Խնդիր, կա՛յ Հայկական Խնդիր, կա՛յ Թիւրքիայի գոյութեան և անկման խնդիր, և ամէն սք աշխատում է իր գոյութեան ապացոյցը տալ և իր իրաւունքների յաղթանակին ձգտել։ — Ո՛չ մէկը դատաւիք է եղել, ամէնքն էլ իրենց պատնէշի վրան են կեցած։ Եւ սրա համար էլ ասում ենք, որ մենք, Հայկական Դատից ձեռք վեր առնելու ոչ իրաւունք և ոչ էլ արածագրութիւն ունինք։ Քանի որ կայ Հայ ժողովուրդ՝ կայ և՛ Հայկական Դատ։ Երբ Ալբանիա, Մուկոլէից, Արաբիա կա՛մ անջատման և կա՛մ ինքնավարութեան են ձգտում, մենք ոչ թէ իրականութեան, այլ մթնոլորտային շերտերի մէջ ապրած կը լինէինք, եթէ մեր բախտը կապէինք Թուրք պետութեան Համապետական բարեկրթութեան հետ անպայման ժողովրդների գործակցութիւնը, նրանց համերաշխութիւնը պիտի դրուի պատմութիւնից յառաջացած իրականութեան վրայ, և ահա՛ այդ իրականութիւնը գալիս է մի անգամ էլ շեշտելու, որ Թիւրքիայի մէջ ապրող ժողովրդները ինքնավարութեան իրաւունքը թէ՛ աշխարհագրական քարտեզի վրան է դրուած և թէ՛ պատմութեան մէջ քանդակուած։ Եւ նրանք, որոնք Համաթրքական խնդիր են ուզում պաշտպանել, urbi et orbi, նրանք իրականութիւնը չեն կարող ունակութեւ, այսպէս տուած իրենք կլինեն։

Թիւրքիայի զինուորական ոյժը վերակազմակերպւած է, ասում են, բայց այդ վերակազմակերպումը որի՞ գրամովն է եղած և ի՞նչ գնով։ չէ որ այդ վերակազմակերպման պատճառով Թուրք պետութիւնը իր պետական ամենամեծ իրաւունքները վաճառել է Հանել և դարձել է դուրսի տակ առնուած մի այնպիսի պետութիւն-կալուած, որի անուանական տէրը Ֆինանսական-տնտեսական մի Հասարակ ձեռնարկ չէ կարողանում անել, առանց որ իր միւս գրաւատեքի ձայնը չբարձրացնէր և նրանց նոր պահանջներ անելու պատճառ չտար։ Եւ վերջին դէպքերը եկան այդ իրողութիւնը և՛ աւելի Հաստատելու։

Այն պետութիւնը որ երեք հարիւր տարուց տուելի եւրոպական քաղաքակրթութեան հետ շփուելուց յետոյ՝ դեռ երէկ անկարող եղաւ հաստատել, որ իր փաստային դրութիւնը կանոնաւորուած և ապահովուած է, ու Բուլղարիան դրահաւորների ուրուականի առաջ՝ «յանուն ճշտական բարեկամութեան» յանձն առաւ փաստային նոր կայաններ տես-

ներ իր պետութեան զինուոր քաղաքների ձեռք — այդպիսի ծի պետութիւն շատ էլ չէ կարող յոխորտալ իր զինուորական ոյժով: Բացառապէս զինուորական ոյժի վրայ կրթնող պե- տութիւններ շատ են երևան եկել, այդպիսի պատմութեան ընթացքում. և նրանք այնքան աւելի շուտ են ընկել, որքան որ այդ զինուորական ոյժը արտայայտիչը չի եղել երկրի իսկական պահանջներին և կարիքներին: Ոչ ոքի համար գաղտնիք չէ, որ առաջի պարտութեանը թուրք զօրքերը փախուստի ճանապարհը պիտի բռնեն, և այդպիսի զինուորներից կազմուած բանակներով չէ, ինչքան էլ որ ոտուար լինին, որ կարելի պիտի լինէր խեղդել ճեշտուղ և ազատագրութեան ձգտող ժողովրդների ձայնը:

Դեռ պատմութիւնը օրինակ չի տուել, որ բռնապետու- թիւնը վերջնականապէս յաղթող լինի՝ և անխորտակելի թուճք կապի ժողովրդների ազատագրութեան առաջ: Երբ այդպիսի օրինակ չի եղել, ուրեմն ամէն ժողովուրդ իր ազատագրութեան Գառը կարող է շարունակել ապահով կերպով, համոզուած լինելով, որ վերջնական յաղթութիւնը իրեն կտրու պիտի լինի:

Ս. Ս. Գ.

## ՏԵՐՐՈՐԱԿԱՆ ԳՈՐԾ

Նկատելով որ Սոխումի շրջանի գիւղացիութիւնը ամենամոտիւղ ճ՝ կերպով կեղեքուած էր Յոյն Արխիււս Ռատաբաշեից:

Նկատելով որ Արխիււսը, որպէս Ազանդա գիւղի գիւղացեա, ուղղա կի գործիք էր Ռուս Բռնապետութեան և իր ձեռքի տակը եղած 43 ստրամնիկներով կատարեալ ահաբեկումի էր ենթարկած Սոխումի ամբողջ շրջանը և բազմաթիւ զո- հեր անմեղ տեղը բանտերը լցրած:

Նկատելով, որ գիւղ ապետի իր պաշտօնով նա ստի- պում էր գիւղացիներին չնչին գնով ծիւացն իրեն վաճառել իրենց արտադրութիւնները և հակա- ռակող ին կամ բանտն էր նետել տալիս կամ գող- թելու ստիպում:

Նկատելով, որ նա ազգայնական հողի վրայ կանգնած՝ ամէն կերպ աշխատում էր Սոխումի շրջ- ջանում ապրող Տաճկահայ գիւղացիներին գող- թեցնել:

Նկատելով, որ Արխիւսը երեք Հիւսիսեան ընկեր- ների ծառնելով բանտն էր նետել տուել և ծի բա- նիւններին էլ աքսորել:

Նկատելով որ բազմաթիւ ստրամնիկներ իր հետ առած՝ նա հետապնդում էր Հիւսիսեան զինուորական խմբերին:

Ո Ր Ո Շ Ո Ւ Ե Կ Ա Լ

Արխիւսին տերրորի ենթարկել:

Տերրորական գործողութիւնը կատարուեցաւ փե- տրբուար 17-ին, երեկոյեան ժամը 6 և կէսին:

Արխիւսը և իր թիկնապահը տեղն ուտողը ըս- տանուեցան:

Տերրորիստները ազատ են:

Սոխումի շրջանի ազգայնակցութիւնը իր մաս- նաւոր գոհունակութիւնը և ուրախութիւնն է յայտնած տերրորական այդ գործողութեան համար:

Լ Ո Յ Ս Տ Ե Ս Ա Ի

Հ Ն Չ Ա Վ Ե Ա Ն Կ Ո Ւ Ս Ա Վ Ց Ո Ւ Թ Ե Ա Ն

16-րդ հրատարակութիւնը

## ԵՐԻՏԱՍԱՐԴ ԹԻՒՐԲԻԱ

Գ ր Ե ց

Ս. ՍԱՊԱՀ-ԳԻՒԼԵԱՆ

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆՆ Է

I. Զ Օ Ն

II. ԾԱԹԱՋԱՐԱՆ

1. ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ
2. "ԵՐԻՏԱՍԱՐԴ ԹԻՒՐԲԻԱՅ" Ի ՄԱԿՈՒՄԸ
3. "ԵՐԻՏԱՍԱՐԴ ԹԻՒՐԲԻԱՅ" Ի ԸՄԲՈՒՆՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՄՐԱԳԻՐԸ
4. ՊԱՐԼԱՄԵՆՏԱԿԱՆ ԹԻՒՐԲԻԱ
5. "ԵՐԻՏԱՍԱՐԴ ԹԻՒՐԲԻԱ" Ե ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ
6. "ԵՐԻՏԱՍԱՐԴ ԹԻՒՐԲԻԱՅ" Ի ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԵՒ ՄԻԴՀԱՏԻ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ
7. "ԵՐԻՏԱՍԱՐԴ ԹԻՒՐԲԻԱՅ" Ի ՊԱՏՄԱԿԱՆ ՍԻԱԼ- ՆԵՐԸ
8. ԹԻՒՐԲԻԱՅԻ ԻՐԱԿԱՆ ԿԱՅՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԿԱԶՄԸ
9. ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ԹԻՒՐԲԻԱ
10. ՕՍՄԱՆԿԱԿՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԱԶԳՈՒԹԻՒՆՆԵՐ
11. ԹԻՒՐԲԻԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԵԱՆ ԵՒ ՎԵՐԱԾՆՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ
12. ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ—

— Գինն է 50 սանտիմ —

## Ն Ո Ւ Ի Ր Ա Տ Ի Ո Ւ Թ Ի Ւ Ն Ն Ե Ր

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ Դանձարանում ստացուել են հետևեալ գումարները—

|                     |       |           |
|---------------------|-------|-----------|
| Նիւ-նորքի           | Մ-դից | 35 դոլար  |
| Փրովիտսի            | "     | 660 "     |
| Նէշուէի             | "     | 100 "     |
| Ուստրի              | "     | 50 "      |
| Սպրինգֆիլդի         | "     | 60 "      |
| Ոգեկլի              | "     | 385 "     |
| Պրանդֆորտի          | "     | 190 "     |
| Համիլթընի           | "     | 80 "      |
| Բէյսի               | "     | 65 "      |
| Կուրի               | Խմբից | 40 "      |
| Մէթիսի              | Մ-դից | 100 ֆրանք |
| Սուլեսայի           | "     | 400 "     |
| Պուրկէի             | "     | 200 "     |
| Փարիզ, Մի Բարեկամից | "     | 500 "     |

## ՈՒՇԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԵՐ ՆՈՐ ՀԱՍՑԵԻՆ

M. BELLART — 24, Avenue du Parc de Montsouris 24, PARIS (France)

Imprimeur-Gérant EMILE LEBÉE